



ՀԱՅԱՍՏԱՆ

	<p>Երկրի բնութագիրը</p> <p>Մայրաքաղաք՝ Երևան:</p> <p>Բնակչությունը (դե յուլի)՝¹ 3.027.000 մարդ:</p> <p>ՀՆԱ միտումները՝ (2009թ.՝ -14.1%, 2010թ.՝ +2.2%, 2011թ.՝ +4.7%, 2012թ.՝ +7.2%, 2013թ.՝ +3.2%):</p> <p>15-75 տարեկանների ակտիվության ցուցանիշը (2012թ.)՝ 62.7%:</p> <p>15-75 տարեկանների զբաղվածության մակարդակը (2012թ.)՝ 51.9% (կանանցը՝ 45.2%):</p> <p>Ոչ ֆորմալ զբաղվածության՝² մակարդակը՝ 50.1%:</p> <p>15-75 տարեկանների գործազրկության մակարդակը (2012թ.)՝ 17.3% (կանանցը՝ 18/2%):</p> <p>15-75 տարեկանների կրթվածության մակարդակը (2012թ.).</p> <ul style="list-style-type: none"> - Տարրական, թերի տարրական՝ 1.5%, - Հիմնական ընդհանուր՝ 10.4%, - Միջնակարգ (լրիվ) ընդհանուր՝ 42.2%, - Նախնական մասնագիտական՝ 2.1%, - Միջին մասնագիտական՝ 22.7% - Բարձրագույն՝ 21.2% <p>Կրթության ոլորտի պետական ծախսերը (2013թ.)՝ ՀՆԱ-ի 2.9%³</p>
--	--

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 3

¹ Մշտական բնակչություն (մշտական բնակության վայրը բնութագրվում է որպես տվյալ երկրում հիմնական բնակության վայր) ընդհանուր առմամբ կոչվում է դե յուրե, իսկ տվյալ պահին երկրում կտնվող քաղաքացիների ամբողջությունը՝ դե ֆակտո

²Հայտ ՀՀ ԱՎԾ-ի՝ ոչ ֆորմալ զբաղվածությունը ընդհանուր զբաղվածության շրջանակներում ոչ ֆորմալ աշխատանքներ ունեցողների մասնաբաժինն է:

³ՀԶՌ 2014-2025, Այլուսակ 38:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
1. ՄԿՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ	6
1.1 ՄԿՈՒ համակարգի ներածություն	6
1.2 ՄԿՈՒ համակարգի տեսլականը և նորարարությունը	7
1.3 Նորարարության և փոփոխությունների համար անհրաժեշտ կարողությունները	8
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ	9
2.1 Տնտեսական և աշխատաշուկայի գործոնները, որոնք ձևավորում են պահանջարկ հմտությունների համար	9
2.2 Հմտությունների պահանջարկի և առաջարկի որոշարկման և դրանց համապատասխանեցման մեխանիզմները	11
2.3 ՄԿՈՒ համակարգի՝ տնտեսության և աշխատաշուկայի կարիքների վրա ազդելու ներուժը	13
3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ	14
3.1 ՄԿՈՒ պահանջարկը ձևավորող ժողովրդագրական և սոցիալական գործոնները	14
3.2 Սովորողների անհատական պահանջմունքների և ձգտումների բավարարումը. մատչելիություն, ընդգրկվածություն, առաջընթաց	15
3.3 Սոցիալ-տնտեսական և ընդգրկվածության պահանջարկի ներկայացումը	16
4. ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ	17
4.1 Որակի ապահովում	17
4.2 Քաղաքականություններ ՄԿՈՒ դասավանդողների և տնօրենների համար	19
4.3 Դասավանդում և ուսումնառություն	20
4.4 Ուսուրսների օգտագործման արդյունավետությունը	20
5. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	21
5.1 ՄԿՈՒ տեսլականի սահմանումը և ռազմավարության	21
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	23
ՀՂՈՒՄՆԵՐ	24
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	25

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Շուրինի գործընթացի ներքո 2012թ. իրականացված վերջին ուսումնասիրումից ի վեր Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) գրավությունը շարունակում է մեծանալ, և 2004 թվականից իրականացվող բարեփոխումների արդյունքում՝ ՄԿՈՒ ընկալումը՝ որպես կրթության երկրորդ հնարավորություն սակավ արտոնյալ մարդկանց համար, փոխակերպվել է ավելի լավ աշխատանք գտնելուն նպաստող կրթության՝ առավել եվրոպական ուղղվածության մոդելի: Սա վերաբերում է հատկապես երկրի մարզերում գործող 12 տարածաշրջանային պետական քոլեջներին (ՏՊՔ), որոնք վերանորոգվել ու արդիականացվել են դոնորների աջակցությամբ:

2012թ. ՀՀ կրթության և գիտության նախարարությանն (ԿԳՆ) է անցել գյուղատնտեսության և մշակույթի, իսկ 2013թ.¹ առողջապահության ոլորտների ՄԿՈՒ-ի համար պատասխանատվությունը: Այսպիսով, այժմ համակարգը գտնվում է միայն մեկ նախարարության համակարգման ներքո, և սա կարող է ապահովել բարեփոխումների գործընթացի առավել հետևողականությունը ու ներդաշնակությունը:

Առկա են որոշակի վկայություններ, հատկապես դրական մեկնաբանություններ գործառուներին ներկայացնող սոցիալական գործնկերներ կազմակերպություններից այն մասին, որ ՄԿՈՒ-ին հաջողվել է առավել «մոտենալ» աշխատաշուկայի պահանջներին, և նրանք առաջարկում են զարգացնել գործընթացը՝ դրա համապատասխանությունն ու որակը շարունակաբար բարելավելու նպատակով:

Բարեփոխումները ներառում են ուսումնական արդյունքների վրա հիմնված նոր ուսումնական պլանների վերանայումը, մշակումն ու իրագործումը և դասավանդողների ու տնօրենների հետագա վերապատրաստումը: 2011թ. վերացվել են ընդունելության քննությունները ՄԿՈՒ հաստատությունների մուտքն առավել դյուրին դարձնելու նպատակով, և շարունակվում են որակավորումների վերանայման աշխատանքները՝ որպես Հայաստանի որակավորումների ազգային շրջանակի (ՀՊԱԾ) իրականացման մաս, այդ թվում նաև ՄԿՈՒ համար կրեդիտային համակարգի պիլոտային ներմուծումը որոշ ՏՊՔ-ներում սկսած 2014-2015 ուսումնական տարվանից:

2004 թվականից ՄԿՈՒ ոլորտի զարգացման հիմնական դրույթը հանդիսացող ԵՄ օժանդակությամբ 2014թ. սկսվել է բյուջետային աջակցության չորրորդ փուլի իրականցումը, որի շրջանակներում, ի թիվս այլոց, վերազինվելու են որոշ արեստագործական ուսումնարաններ, երկու քոլեջներում ստեղծվելու են սահմանափակ ֆիզիկական կարողություններով ուսանողների համար մուտք ապահովող պայմաններ, բարելավվելու են կարիերայի ուղղորդման ծառայությունները և փորձարկվելու է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման գործընթացը: Բյուջետային աջակցության այս փուլի իրագործումը կշարունակվի մինչև 2015թ.:

Կառավարության կողմից 2014թ. մարտին ընդունված Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (ՀՀԾ) 2014-2025 փաստում է, որ կրթությունը երկրի կայուն զարգացման հիմնական գործիքն է, և որ դրա որակի, արդյունավետության, համապատասխանության և մատչելիության բարձրացումը բոլոր մակարդակներում գլխավոր գերակայությունն է: ՀՀԾ-ն, որը հիմնված է 2008թ. ընդունված Կայուն զարգացման ծրագրի (ԿՀԾ) հիմն վրա, ընդգծում է, որ զբաղվածության աճը որակյալ և բարձր արտադրողականությամբ աշխատատեղերի ստեղծման միջոցով համարվում է երկրի ընդհանուր ռազմավարական շրջանակի հիմնական նպատակը:

Բացի այդ, ՀՀԾ-ն վեր է հանում, որ հիմնական ընդհանուր կրթություն ստացածների շրջանում համակարգի հրաժարվելու և միջնակարգ կրթությունը չշարունակելու աճող միտում կա: Նրանց շուրջ 7,7%-ը լրել է կրթությունը 2011/2012 ուսումնական տարում, և այդ պատճառով ԿԳՆ-ն օրինագիծ է ներկայացրել Խորհրդարան, համաձայն որի անվճար պարտադիր կրթությունը սկսած 2015-2016 ուսումնական տարվանից պետք է երկարածվի 9-ից մինչև 12 տարի: Ծրագիրն ընդգծում է, որ միջնակարգ կրթության մեջ ընդգրկվածների թվի այս անկումը կապված է աղքատության հետ, և որ քաղաքային և գյուղական բնակավայրերում տարբերությունները մեծ չեն՝ ըստ 2010թ. բնակչության ամենադժաման 10% ընդգրկվածության ցուցանիշի, որը եղել է 54% քաղաքային և 53% գյուղական բնակավայրերի համար:

Նույն ռազմավարական ծրագիրը նշում է, որ կրթության արդյունավետությունն ու որակը բարձրացնելու համար կարևոր է պայքարել կոռուպցիայի դեմ համակարգի բոլոր մակարդակներում:

Տնտեսական ճգնաժամի պատճառով բյուջետային հատկացումները կրթությանը թեթևակի կրճատվել են 2011թ. 3,2%-ից մինչև համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 3%-ը 2012թ. և գնահատվել է 2,9% 2013թ.: Այդուհանդերձ, 2012-2013 ուսումնական տարվանից սկսած անվճար տեղերի թիվը միշտն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կրթական հաստատություններում աճել է 50%-ով: Այսպիսով, միջին ՄԿՈՒ ընդգրկվածության աննշան աճ է գրանցվել: Դասավանդող/ուսանող

հարաբերակցությունը մնացել է կայուն և նախնական (ISCED մակարդակ 3) ու միջին ՄԿՈՒ (ISCED մակարդակ 5B) ոլորտում և շարունակում է մնալ ցածր՝ հանրակրթության համեմատ: Նոր օրենքի ընդունմամբ, որը նախատեսում է անվճար պարտադիր կրթության ընդլայնում, ՄԿՈՒ-ն հիմնական կրթությունից հետո ընդգրկված ուսանողների համար ամբողջությամբ կֆինանսավորվի ԿԳՆ կողմից, իսկ սա ենթադրում է, որ հատկացումները՝ որպես ՀՆԱ-ի տոկոս, զգալիորեն կաճեն 2015 ուսումնական տարվանից:

Սոցիալական երկխոսությունը հստակ սահմանված է պաշտոնական փաստաթղթերում, իսկ սոցիալական գործնկերների մասնակցությունն աշխատանքային խմբերում և խորհուրդներում ապահովված է: Սոցիալական գործնկերների ներկայացուցիչներն անդամակցում են եռակողմ կառուց հանդիսացող ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդին (ՄԿՈՒԶԱԽ), և ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհրդուներին (ԿԽ): Ոլորտային հանձնաժողովները քննարկում և հավանություն են տալիս որակավորման չափորոշիչներին: Այնուամենայնիվ, տարբեր առիթներով թե՛ սոցիալական գործնկերների, թե՛ քոլեցների ԿԽ ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել սոցիալական երկխոսության այս մեխանիզմների իրական արդյունավետության վերաբերյալ:

Վերջին ուսումնասիրությունից ի վեր Հայաստանի տնտեսությունը 2012թ. զգալի ՀՆԱ աճ է գրանցել (7,2%), որին հաջորդել է դանդաղեցման մի ժամանակահատված 2013թ. (3,2%)՝ որպես զյուղատնտեսության արդյունքների վրա անբարենպաստ եղանակային պայմանների ազդեցության և գազի գնի բարձրացման հետևանք:

Չնայած տնտեսական աճին՝ աշխատաշուկան շարունակվում է բնութագրվել աշխատուժի ցածր պահանջարկով և աշխատատեղերի սակավությամբ: Տնտեսությունում դեռևս գերակշռում են աշխատատար ոլորտները, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, հյուրանոցները, ռեստորանները և հանքարդյունաբերությունը, որտեղ ցածր որակավորումներ են պահանջվում: Ակնհայտ է, որ զբաղվածության հնարավորությունները բարձրացնելու համար Հայաստանը պետք է ներգրավի ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա ներդրումներ և նպաստի նոր ընկերությունների ստեղծմանը նորարական ոլորտներում մրցակցային գործարար միջավայրի բարելավման միջոցով:

Բնակչության ընդհանուր կրթական մակարդակը մնում է բարձր: Սակայն, գործազրկության կամ ոչ կայուն աշխատանքի ցուցանիշները դեռևս բարձր են և՝ համալսարանների, և՝ ՄԿՈՒ շրջանավարտների համար:

Գործազրկության, մասնավորապես երիտասարդների շրջանում, և ցածր աշխատավարձերի պատճառով միգրացիոն հոսքերը, հատկապես դեպի Ռուսաստան, շարունակում են նշանակալից լինել: Այսպիսով, գործազրկության բարձր մակարդակը ընդգծում է կառավարության կողմից զբաղվածության ակտիվ միջոցառումների լայն շրջանակի նկատմամբ քաղաքական ուշադրության անհրաժեշտությունը: Աշխատանքի որոնումը խթանելու համար ավելացել է 2014թ. համապատասխան բյուջեն, մինչդեռ նոր գրանցված գործազրկություններին գործազրկության նպաստը (պասիվ միջոցառում) այլևս չի վճարվելու: 2014թ. հունիսին «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը վերանվանվել է Զբաղվածության պետական գործակալություն (ՀՊԳ), և տեղական գրասենյակները միացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տարածքային այլ կառույցներին՝ ծևավորելով «Ինտեգրված սոցիալական ծառայություններ», որոնք աջակցություն են ստանում Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից:

Առաջիկա տարիների հիմնական մարտահրավերներն են՝

1. Զարգացնել ՄԿՈՒ բարեփոխումները՝ համակարգի բովանդակությունն ու առաջարկը շարունակական կերպով բարելավելու նպատակով: Առկա տվյալները ցույց են տալիս, որ կրթությունն ու հմտությունները օգնում են մարդկանց խուսափել աղքատությունից, և նպատակային ծրագրերը պետք է նախագծեն այնպես, որ անդրադառնան հատուկ խմբերի կարիքներին: 2015-2016 ուս. տարվանից անվճար պարտադիր կրթության երկարագումը 9-ից մինչև 12 տարի կարևոր մարտահրավեր է, քանի որ այն կիանգեցնի ՄԿՈՒ մեծ պահանջարկի, որն իր հերթին կպահանջի բյուջետային հատկացումների էական ավելացում: Այսպիսով, հետագա քայլերը մշակելիս և դրանք իրագործելիս ԿԳՆ-ն պետք է որոշարկի որակի, համապատասխանության, արդյունավետության ու արդյունավորության ցուցիչներ: Բարեփոխումները պետք է շարունակվեն՝ գերակայությունը տալով որևէ ռազմավարական ոլորտի, օրինակ՝ գյուղատնտեսությանը. որը մինչ այժմ մեծ ուշադրության չի արժանացել, սակայն բոլոր առանցքային փաստաթղթերում սահմանված է որպես երկրի հետագա տնտեսական զարգացման համար գերակա ոլորտ:

2. Արագացնել Հայաստանի որակավորումների ազգային շրջանակի (ՀՌԱԾ) իրականացման գործընթացը, քանի որ այն կարող է ապահովել առավել համակարգված մոտեցում բարեփոխումների նկատմամբ:

3. Ընդլայնել Ոլորտային հանձնաժողովների (ՈՀ) գործառույթների և իրավասությունների շրջանակը հմտությունների կարիքների սահմանամասն և կանխատեսման տեսանկյունից՝ որպես կարևոր գործիք ՄԿՈՒ-ն երկրի սոցիալ-տնտեսական կարիքներին համահոնչ զարգացնելու նպատակով:

4. Խթանել արդյունավետ գործընկերություն կրթության և բիզնեսի միջև կրթությունից աշխատանք ՄԿՈՒ շրջանավարտների անցումը ոյլուրին դարձնելու նպատակով: Երիտասարդների գործազրկությունը շատ լուրջ խնդիր է, և զբաղվածության նոր ակտիվ միջոցառումները կարող են խթանել գործազրկության նվազեցումը: Այսպիսով, պետք է բարելավել աշխատաշուկայի մասին տեղեկատվության տարածումն ու հաստատությունների, Զբաղվածության պետական գործակալության, գործառուների, տեղական համայնքների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը և դարձնել այն առավել գործուն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Թուրինի գործընթացը» ԵԿՀ-ի կողմից 2010թ. ձեռնարկած՝ ՄԿՈՒ քաղաքականության առաջընթացի մասնակցային ակնարկ է, որի նպատակն է զարգացնել ազգային շահագրգիռ կողմերի՝ բարեփոխումների առաջընթացի գնահատման կարողությունները: «Թուրինի գործընթաց» իրականացվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ գործընկեր երկրների մեծ մասի կողմից՝ ԵԿՀ-ի աջակցությամբ:

«Թուրինի գործընթացի» նպատակն է իրականացնել յուրաքանչյուր երկրի ՄԿՈՒ բարեփոխումների հակիրճ, փաստագրված վերլուծություն, այդ թվում՝ քաղաքականության առանցքային ուղղությունների, մարտահրավերների, սահմանափակումների, ինչպես նաև լավագույն փորձի ու հնարավորությունների որոշարկումը, որպեսզի՝

- աջակցի երկրների՝ ապացույների վրա հիմնված քաղաքականության մշակումը՝ նպատակ ունենալով բարելավել ՄԿՈՒ ներդրումը կայուն զարգացման, մասնավորապես մրցունակության ու սոցիալական համախմբվածության գործին:
- հիմք ծառայի այդ երկրների համար ԵԿՀ աջակցության ռազմավարության մշակմանը.
- տեղեկացնի Եվրոպական Հանձնաժողովին այս երկրներին ԵՄ հետագա արտաքին աջակցության վերաբերյալ ԵԿՀ-ի առաջարկությունների մասին:

Ինչպես Բոլոնիայի, այնպես էլ Թուրինի գործընթացը 2010 թվականից ծեռք է բերել տեսանելիություն և վստահելիություն Հայաստանում և ճանաչվել է ազգային իշխանությունների կողմից որպես արժեքավոր գործիք ՄԿՈՒ բարեփոխումների առաջընթացն ուղղորդելու և գնահատելու համար, ինչպես նշված է ՀԶԾ-ում:

Նոյն ռազմավարական ծրագիրը ճանաչում է «Թուրինի գործընթացը» որպես ցլյանս ուսումնառության համատեքստում կրթության և ՄԿՈՒ ոլորտում Եվրոպական համագործակցության հիմնական գործիք և առաջարկում է շարունակել բարեփոխումը՝ հետապնդելով հետևյալ նպատակը. «Երկրի կրթական ու գիտական զարգացման ռազմավարական նպատակներին և Բոլոնիայի ու Թուրինի համաձայնագրերի դրույթներին մասնագիտական կրթության համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումների շարունակում...»⁴:

Սույն գեկույցը մշակվել է՝ սերտորեն խորհրդակցելով Հայաստանի իշխանությունները ներկայացնող պետական կառույցների, սոցիալական գործընկերներ կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների և այլոց հետ: Հատուկ շնորհակալության են արժանացել <<ԿԳՆ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությունը, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը և «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամը՝ տվյալների և տեղեկությունների տրամադրման հարցում իրենց ամենօրյա աջակցության համար:

Զեկույցը հիմնված է առկա փաստաթղթերի հավաքագրման և ուսումնասիրման, ինչպես նաև ԵԿՀ փորձի ու ՄԿՈՒ բարեփոխումների գործընթացում երկար տարիների ընթացքում մի շարք առաքելությունների, շիփումների, այցելությունների և շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների միջոցով ունեցած ներգրավվածության վրա: Վիճակագրությունը հիմնականում տրամադրվել է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կողմից:

⁴ՀԶԾ 2014-2025, պարբերություն 460, կետ 6:

1. ՄԿՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

1.1 ՄԿՈՒ համակարգի ներածություն

Ինչպես բազմաթիվ նախկին խորհրդային երկրներում, այնպես էլ Հայաստանում այդ ժամանակներից ժառանգած ՄԿՈՒ համակարգն այնքան էլ գրավիչ չէր՝ ի համեմատ հանրակրթությանը և բարձրագույն կրթությանը: 2004 թվականից ոգեշնչված աշխատանքի և հմտությունների հիմնահարցերին ուղղված ԵՄ քաղաքականությունից՝ ՄԿՈՒ բարեփոխումները դարձել են ազգային օրակարգի առանցքային գերակայություններից մեկը, ինչպես նաև արժանացել դոնորների մեջ ուշադրությանը:

Հայաստանում ՄԿՈՒ-ն մեծամասամբ ընդգրկում է հիմնական մասնագիտական կրթությունն ու ուսուցումը (ՀՄԿՈՒ). մինչև վերջերս շարունակական մասնագիտական ուսուցումը (ՇՄԿՈՒ) համակարգային մոտեցման մաս չէր, քանի որ այն վերաբերում էր ոչ ֆորմալ ուսուցմանը, որը կազմակերպվում էր ընկերությունների կողմից իրենց սեփական անձնակազմի համար կամ SՀՀ, օտար լեզուների, մարդեթինգի և այլ նմանատիպ ոլորտներում մասնագիտական ուսուցում տրամադրող որոշ գնահատականներով շուրջ 200 կազմակերպությունների կողմից: Զբաղվածության պետական գործակալությունը կազմակերպում է ՇՄԿՈՒ նաև սահմանափակ թվով գործազրուկների համար: Այդ դաշնային իրականացնողներն ընտրվում են տեղական մրցույթների միջոցով, որոնց կարող են մասնակցել նաև ուսումնական հաստատությունները, եթե դրանք բավարարում են անհրաժեշտ պահանջները փորձառության և նյութական ապահովածության տեսանկյունից:

Այսպիսով, ՄԿՈՒ սահմանումը սույն գեկուցում հիմնականում վերաբերում է ՀՄԿՈՒ-ին, որը բաժանված է երկու տարրեր մակարդակների՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության:

1) Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է և հանգեցնում է «Արհեստավորի» որակավորման աստիճանի՝ հիմնական ընդհանուր (ինը տարի) կամ միջնակարգ ընդհանուր կրթության (12 տարի) հիման վրա և համապատասխանում է ISCED-ի 3-րդ մակարդակին:

2) Միջին մասնագիտական կրթության տևողությունը 2-ից 5 տարի է, հանգեցնում է «Մասնագետի» որակավորման աստիճանի՝ հիմնական ընդհանուր (ինը տարի) կամ միջնակարգ ընդհանուր կրթության (12 տարի) հիման վրա և համապատասխանում է ISCED-ի 5Բ մակարդակին:


Երկու մակարդակներն էլ առաջարկում են մասնագիտական որակավորում (աշխատաշուկա մուտք գործելու հնարավորություն) և միջնակարգ ընդհանուր կրթություն (ատեստատ)՝ դրանով իսկ ապահովելով ուսանողների համար բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը (տես նաև Հավելված 2):

Նախնական ՄԿՈՒ-ն իրականացվում է 25 ուսումնարաններում և 20 միջին ՄԿՈՒ քոլեջներում: Ընդգրկվածությունն աճել է շուրջ 5.600-ից 2011թ. մինչև 6.800՝ 2012թ.: Ուսանողների 86%-ն ունեն հիմնական, մինչդեռ 14%-ը՝ միջնակարգ կրթություն: 2012/2013 ուսումնական տարում նախնական ՄԿՈՒ ընդգրկված նոր ուսանողների թիվն աճել է 3.391-ի՝ 2011/2012թթ. 3.111-ի դիմաց: Նախնական ՄԿՈՒ ուսանողները հակված են ընտրել հիմնականում արվեստի և դիզայնի, ծառայությունների, տնտեսագիտության և կառավարման ոլորտի մասնագիտություններ: Ուսանողների մոտ 90%-ը սովորում են անվճար հիմունքներով: Ուսանող/դասավանդող հարաբերակցությունը մնացել է կայուն՝ 2012թ. հասնելով իր միջին արժեքին՝ 8:1⁵:

Միջին ՄԿՈՒ-ն իրականացվում է 72 քոլեջներում և 6 համալսարաններում, և ընդհանուր ընդգրկվածությունը մնացել է կայուն՝ 27.452 ուսանող 2012թ. ի վեր (2011թ. 27.381): Նրանցից 63%-ն ունեն հիմնական ընդհանուր, մինչդեռ 37%-ը՝ միջնակարգ կրթություն: Միջին ՄԿՈՒ-ին, ինչպես և բարձրագույն կրթությունը, դասակարգվում է որպես ISCED 5Բ մակարդակ: Միջին ՄԿՈՒ ընդգրկված նոր ուսանողների թիվը 2012/2013 ուսումնական տարում աճել է՝ հասնելով 10.399-ի՝ 2011/2012թթ. 9.462-ի դիմաց: Միջին ՄԿՈՒ ընդգրկված անվճար հիմունքով սովորող ուսանողների ընդհանուր թիվն աճել է մինչև 50%, իսկ ուսանող/դասավանդող հարաբերակցությունը 2012թ. եղել է 9,28: ՄԿՈՒ համակարգի մաղումների մասին հստակ տեղեկատվությունը բացակայում է: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների՝ միջին ՄԿՈՒ-ն հիմնականում իրականացվում է առողջապահության, սպորտի, մանկավարժության, տնտեսագիտության, տրանսպորտի և կապի ոլորտներում:

⁵ Հաշվարկը հիմնված է 2012թ. ԱՎԾ-ի կողմից հրապարակված դասավանդողների ընդհանուր թվի վրա:

Գծանկար 1. Նախնական և միջին ՄԿՈՒ հասպարությունների ուսանողների թիվը 2007-2012 թվականներին



Աղյուրը՝Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ժառայություն, 2012

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, որ ի համեմատ 2010թ.՝ հանրակրթության համար նախատեսված պետական բյուջեն 2014թ. աճել է 11%-ով, մինչդեռ նախնական ՄԿՈՒ բյուջեի աճը կազմել է 49%, միջին ՄԿՈՒ-ինը՝ 96% և բարձրագույն կրթությանը՝ 29%:

Աղյուսակ 1. Կրթության համար պետական բյուջեի հարկացումները 2010/14թթ. (1000 դրամ)

Կրթություն	2010	2011	2012	2013	2014
Հանրակրթություն	70.300.532,60	71.348.093,20	71.855.145,60	72.878.733,30	78.027.372,80
Նախադպրոցական կրթություն	-	96.995,7	156.669,2	284.668,30	494.638,10
Տարրական կրթություն	20.653.627,3	24.978.555,2	22.054.372,2	23.673.104,30	26.029.041,20
Հիմնական ընդհանուր	34.782.529,8	31.435.690,0	30.605.561,7	30.768.531,50	32.768.372,90
Միջնակարգ ընդհանուր	14.864.375,5	14.836.852,3	19.038.542,5	18.152.429,20	18.735.320,60
Նախնական մասնագիտական կրթություն	1.910.443,0	1.875.434,8	2.202.733,2	2.562.049,60	2.854.281,30
Միջին մասնագիտական կրթություն	2.970.799,4	3.164.408,9	3.363.257,0	3.841.661,20	5.843.548,70
Բարձրագույն և հետքուհական կրթություն	7.619.379,1	7.798.809,8	7.808.150,5	8.111.390,50	9.795.346,20

Աղյուրը՝ Տնտեսական զարգացման և հետքազուրությունների կենսորոն (ՏԶՀԿ), Երևան, Հայաստան

1.2 ՄԿՈՒ համակարգի տեսլականը և նորարարությունը

Հայաստանը զուրկ է բնական ռեսուրսներից, և ինչպես նշված է 2014թ. մարտին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված ՀՀԾ-ում, մարդկային կապիտալը երկրի հիմնական հարստությունն է, և կրթությունը համարվում է «առանցքային մրցակցային առավելությունն» ու երկրի պատկերը զարգացած գիտական և տեխնոլոգիական կարողություններով խթանելու գործիքը։ Զբաղվածության աճը որակյալ և լավ վարձատրվող աշխատանքներ ստեղծելու միջոցով ՀՀ-ի հիմնական նպատակն է, և այն կարելի է ձեռք բերել արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում աճող զարգացման շնորհիվ։ Ոչ ֆորմալ գրադարձության կրճատում է նախատեսվում, մասնավորապես գյուղատնտեսության մեջ, և միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացները կարևոր դեր են խաղալու երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը խթանելու գործում։

Կրթության ոլորտը կարգավորող հիմնական փաստաթուղթը «ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքն է, որը սահմանում է իրականացման գերակայությունները և փաստում է, որ «կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը»։

ՄԿՈՒ 2012-2016թթ. բարեփոխումների ծրագիրը (մշակված է ԿԳՆ-ի կողմից և արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը 2012թ. հունիսին) ընդգծում է բարեփոխումների մինչ այժմ ունեցած ձեռքբերումները։ Այն ներառում է նաև հետագա անհրաժեշտ միջոցառումների իրականացման ժամանա-

կացուցը և կարևորում ՄԿՈՒ համակարգի ինտեգրումը մասնագիտական կրթության միասնական Եվրոպական տարածքին: Ավելին, ծրագիրն ընդգծում է մարդկանց՝ աշխատաշուկայում պահանջվող հմտություններով ապահովելու ու կրթության և ուսուցման միջոցով ժամանակակից հասարակություն ստեղծելու կարևորությունը: Բարեփոխման ծրագիրը նշում է, որ կարևոր է ստեղծել ուսումնական հաստատությունների և բիզնեսի միջև համագործակցության և երկխոսության արդյունավետ մեխանիզմներ:

1.3 Նորարարության և փոփոխությունների համար անհրաժեշտ կարողությունները

Վերջին տեսանցումից ի վեր բարեփոխումների շրջանակներում շարունակում է նոր և ուսումնառության արդյունքների վրա հիմնված ուսումնական պլանների մշակումն ու իրականացումը, դասավանդողների և տնօրենների հետագա վերապատրաստումը: 2011թ. վերացվել են ՄԿՈՒ հաստատությունների ընդունելության քննությունները, և <ՈԱԾ-ի իրականացման ուղղությամբ որոշ տարածաշրջանային պետական քուեներում ՄԿՈՒ կրեդիտային համակարգի փորձարկման աշխատանքներ են տարվում: 2004 թվականից ՄԿՈՒ ոլորտի զարգացման հիմնական դրույթը հանդիսացող ԵՄ օժանդակությամբ 2014թ. սկսել է իրականացվել բյուջետային աջակցության չորրորդ փուլը, որի շրջանակներում, ի թիվս այլոց, վերագինվելու են որոշ արհեստագործական ուսումնարաններ, երկու քուեներում ստեղծվելու են սահմանափակ ֆիզիկական կարողություններով ուսանողների համար մուտք ապահովող պայմաններ, բարելավվելու են կարիերայի ուղղորդման ծառայությունները և փորձարկվելու են ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման գործընթացը: Բյուջետային աջակցության այս փուլի իրագործումը կշարունակվի մինչև 2015թ.:

«Կրթության մասին» << օրենքի վերանայումը քննարկվում է խորհրդարանում, և ընդունումը նախատեսվում է 2014թ. վերջին: Հիմնական փոփոխությունը վերաբերում է 2015-2016 ուսումնական տարվանից անվճար պարտադիր կրթությունը 9-ից մինչև 12 տարի երկարաձգելուն, որպեսզի լուծվի աշակերտների այն 7,7%-ի խնդիրը, ովքեր չեն կարողանում ստանալ միջնակարգ կրթություն: Սա ենթադրում է, որ ՄԿՈՒ ոլորտում ընդգրկվածության պահանջարկը կաճի և պետական ֆինանսավորումը համապատասխանորեն կավելան:

Նոյն օրենքը անդրադառնում է լրացուցիչ և շարունակական կրթության քաղաքականության իրագործմանը՝ որպես ՇՄՈՒ խթանման կարևոր ներդրում, այդ թվում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման նոր հայեցակարգին ու ընթացակարգերին: Օրենքը վկայակոչում է «Լրացուցիչ և շարունակական կրթության 2013-2017թթ. ռազմավարությունը», որն ընդունվել է ԿԳՆ-ի կողմից 2013թ. դեկտեմբերին՝ այլ պետական կառույցների, <Կ-ների և սոցիալական գործընկերներ կազմակերպությունների հետ խորհրդափոխանակության միջոցով:

2013թ. ԵԿՀ-ն ԿԳՆ լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի և Հայ խոհարարական պանդությունների զարգացման և պահպանման <Կ-ի հետ համագործակցությամբ իրականացրել է ծրագիր խոհարանների ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգի փորձարկման նպատակով:

ՄԿՈՒ արդյունավետության բարելավմանը նպաստող մի նոր տարր վերաբերում է ԵԿՀ աջակցությամբ 12 ՏՊՁ-ներում կարիերայի ուղղորդման ծառայությունների ստեղծմանը: Մեթոդաբանության մշակման և աշխատակազմի վերապատրաստման աշխատանքներն իրականացվել են Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի (ՄԿՄԿ) աջակցությամբ: Այս կենտրոնը գործում է 2013թ. հունվարից << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո և նախկինում եղել է երիտասարդներին ուղղակիորեն կարիերայի ուղղորդման ծառայություններ մատուցող՝ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն: Մասնագիտական կողմնորոշման (կարիերայի ուղղորդման) համակարգի զարգացման հայեցակարգը արժանացել է << կառավարության հավանությանը 2012թ. հոկտեմբերին: Նպատակն է՝ ապահովել կարիերայի ուղղորդման ծառայությունների մատուցում նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում: 2013 թվականից ԵԿՀ ֆինանսավորած ծրագրի միջոցով իրականացվել են կարիերայի ուղղորդման փորձագետների վերապատրաստման և համապատասխան ձեռնարկի մշակման աշխատանքներ, կազմակերպվել աշխատանքի տոնավաճառներ, կատարվել մոնիթորինգ և խորհրդատվական այցելություններ:

2011թ. << կառավարության կողմից ստեղծվել է նաև Ուսուցման ազգային հիմնադրամը (ՈԱԾ), որի նպատակն է խթանել ՇՄՈՒ շուկան և դարձնել այն առավել համահունչ աշխատաշուկայի կարիքներին և ապահովել որակյալ աշխատություն:

ՈՒԱՀՀ-ի առաքելությունը, ինչպես նշված է 2013-2016թթ. ժամանակահատվածն ընդգրկող ռազմավարության մեջ, երկրի տնտեսական արտադրողականությունն ու մոցունակությունը բարձրացնելն է, որին կարելի է համար գրաղվածության և աշխատումի, այդ թվում՝ խոցելի խմբերի կենսամակարդակի խթանման միջոցով՝ ապահովելով մասնագիտական կրթության և ուսուցման հնարավորություն: Ռազմավարության համաձայն՝ ուսուցման ֆինանսավորումը պետք է կատարվի ՈՒԱՀՀ-ի սեփական ռեսուրսներից՝ որպես ԿԳՆ-ի, գործատուների և աշխատավորների կողմից նախատեսված բյուջետային հատկացումների մի մաս: ՈՒԱՀՀ-ի ծեռքբերումների մասին առայժմ հասանելի տեղեկատվություն չկա:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Տնտեսական և աշխատաշուկայի գործոնները, որոնք ձևավորում են պահանջարկ հմտությունների համար

Ինչ վերաբերում է երկրի դիրքին միջազգային ասպարեզում, կարևոր է նշել, որ Հայաստանը մինչ օրս չի ստորագրել ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրը: Պետությունը որոշել է Բելառուսի և Ղազախստանի հետ մեկտեղ միանալ Ռուսաստանի գլխավորած մաքսային համաձայնագրին, որը նախատեսվում է ստորագրել 2014թ. հոկտեմբերին: Սակայն, 2013թ. նոյեմբերին կայացած Վիլյուսի գագաթաժողովի ընթացքում ԵՄ-ն և Հայաստանն ընդունել են փաստաթուղթ՝ հոչակելով ոչ առևտրային բնագավառներում, ինչպիսիք են, օրինակ՝ մարդու իրավունքները, արդյունավետ կառավարումը, օրենքի գերակայությունը, իրենց համագործակցության հետագա ընդլայնման հավակնությունները:

Անդրադառնալով տնտեսական կատարողականին՝ երկիրը (դասակարգված <Բ-ի կողմից որպես միջին եկամուտ ունեցող երկիր) գրանցել է <ՆԱ-ի աննշան նվազում 2013թ. համեմատությամբ: 2009թ. զգալի անկրությունը (-14,1%) <ՆԱ-ն սկսել է աստիճանաբար աճել՝ 2010թ. 2,2%-ից մինչև 4,7%՝ 2011թ. և 7,2%՝ 2012թ., որին հաջորդել է դանդաղեցման ժամանակահատված 2013թ. (+3,2):

2010-2013թթ. ընթացքում արդյունաբերության ներդրումը <ՆԱ-ի մեջ որոշ չափով նվազել է. աննշան բարձրացել է 36,9%-ից մինչև 31,5%: Կիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով 2013թ. գրանցվել է <ՆԱ-ի մեջ գյուղատնտեսության ներդրման աննշան կրճատում՝ 20,6% նախորդ տարվա 21,6%-ի դիմաց: Ծառայությունների ոլորտի մասնաբաժնը <ՆԱ-ում աճ է գրանցել՝ 2013թ. հասնելով 46,6%-ի (2012թ. 44,1%-ի դիմաց):

2008-2012թթ. ընկած ժամանակահատվածում հայկական ազգային արժույթն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և այլ արտարժույթների նկատմամբ, որը հանգեցրել է մասնավոր տրանսֆերտների և օտարերկրյա ուղղակի ներդրումների վրա:

Հայաստանում սղաճի տեմպը կազմել է 5,8% 2013թ.՝ ըստ <<ԱՎԾ-ի տվյալների:

2012թ. << կառավարությունն ընդունել է միջոցառումների ցանկ, որոնք նպատակառությամբ են նպաստելու բիզնես սկսելուն, ինչպես, օրինակ՝ ընկերության գրանցման վճարի վերացումը, աշխատողի, գործատուի սոցիալական վճարների և անհատական եկամտահարկի միավորումը մեկ միասնական եկամտային հարկի համակարգում: Երկրի ընդհանուր վարկանիշը <Բ-ի «Բիզնեսի վարում» հետազոտության մեջ եղել է 37-րդ⁶ տեղը 189 երկրների թվում:

ՓՄՁ ոլորտը, կարևոր դեր ունենալով տնտեսական զարգացումը խթանելու գործում, շարունակում է լինել կառավարության գերակայությունը: 2010թ. ծեռնարկված բարեփոխումներն ընդգրկել են գործարար միջավայրի բարելավմանը և իրենց բիզնես-պլանների վրա հիմնված արդյունաբերական ձեռնարկությունների համար վարկի հասանելիության մեծացմանը նպատակառությամբ գործողություններ: Ըստ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁԱԿ)՝ 2010թ. հաշվարկների՝ ՓՄՁ-ների ներդրումը <ՆԱ-ի մեջ կազմել է 43% (աճ 41,7%-ից 2008թ.). 2010թ. զբաղվածությունը ՓՄՁ ոլորտում՝ որպես

⁶ Տես՝ «Բիզնեսի վարում 2014», ՓՄՁ-ների մասին օրենսդրության ըմբռնումը (11^{րդ} հրատարակություն), <Բ-ի և ԱՄՆ:

⁷ Կենտրոնը տնօրինում է պետական բյուջեից ՓՄՁ-ների զարգացման համար հատկացված միջոցները: Այն ապահովում է տեխնիկական աջակցություն, այդ թվում՝ բիզնես խորհրդատվություն և ուսուցում և ֆինանսական աջակցություն վարկային երաշխիքների, կապիտալի ֆինանսավորման, մասնակի սուբյեկտների վարկային տոկոսադրույթների միջոցով:

ընդհանուր զբաղվածության տոկոսային հարաբերություն, աննշան աճել է մինչև 42,2%⁸: 2013թ. սկզբում ՓՄՁ-ները կազմել են ակտիվության գործող տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվի 98%-ը⁹.

2013թ. Գլոբալ մրցունակության ինդեքսում 148 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 79-րդ տեղը: Սա առաջխաղացում է նախորդ տարվա համեմատությամբ, երբ Հայաստանը զբաղեցնում էր 82-րդ տեղը 144 երկրներից: Հայաստանը, ինչպես նաև Արևելյան գործընկերության մուս երկրները, մասնակցել են Եվրոպական փոքր բիզնեսի ակտի շրջանակներում կատարված առաջընթացի գնահատմանը: Այս գործընթացն ուղղված է քաղաքականության մշակման և իրականացման ուժեղ և թույլ կողմերի բացահայտմանը, փորձի և կատարողականի համեմատությանը, Եվրոպական փոքր բիզնեսի ակտով առաջ քաշված քաղաքականության սկզբունքների իրականացման համար գերակայությունների և միջոցառումների համակցման սահմանմանը:

Ինչ վերաբերում է մարդկային կապիտալին, 2012թ. հրապարակված գեկույցն ընդգծում է, որ գիտելիքների և հմտությունների զարգացումը ձեռնարկությունների աճի համար ճանաչվում է որպես գերակայություն և արժանանում է գործարար համայնքի հավանությանը: Նոր և աճող ձեռնարկությունների համար ուսուցման և աջակցության համակարգի հետագա զարգացումը պահանջում է տվյալների պարբերական հավաքագրում, ինչպես նաև ծրագրերի ազդեցության վերլուծություն: Ըստ ՄԿՈՒԶԱԿ-ի տրամադրած տեղեկությունների՝ ձեռնարկատիրության ոլորտում ցլյանս ուսումնառության բաղադրիչները 2010 թվականից ներառված են ուսումնական պլաններում սոցիալական գիտություններին, այդ թվում՝ տնտեսագիտությանը, հոգեբանությանը, էթիկային և աշխատանքի անվտանգությանը վերաբերող մոդուլի տեսքով:

Ինչ վերաբերում է աշխատաշուկային, իրավիճակը մնացել է կայուն. աննշան աճել են ակտիվության ցուցանիշը (2011թ. 61,2%-ից մինչև 62,7% 2012թ.) և զբաղվածության մակարդակը (2011թ. 51,4%-ից մինչև 51,9% 2012թ.), կանանց զբաղվածությունը կազմում է 45,2%:

Ըստ կրթության մակարդակի՝ զբաղվածության ամենաբարձր ցուցանիշը գրանցել են բարձրագույն և հետքրության կրթություն ունեցողները՝ 61,6%, որին հաջորդում է նախնական ՄԿՈՒ-ն՝ 56,7%, միջին ՄԿՈՒ-ն՝ 53,7%, միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը՝ 50,8%, հիմնական ընդհանուր կրթությունը՝ 33,6% և տարրականն ու թերի տարրական կրթությունը՝ 38,1%:

2012թ. գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների մասնաբժինը շարունակում է բարձր մնալ (37,3%) և աննշան անկում է դրսևորում 2010թ. համեմատ (38,6%): Կանանց զբաղվածությունը կազմում է 44%:

Տնտեսապես ակտիվ բնակչությունը ներառում է 56,5% վարձու աշխատողներ, 0,5% գործատուներ, 28,5% ինքնազբաղվածներ և 14,5% այլ կատեգորիաներ (ըստ՝ 2012 տվյալների):

Ըստհանուր գործազրկության մակարդակը փոքր-ինչ նվազել է 2010թ. 19%-ից մինչև 17,3% 2012թ.¹⁰՝ ամենաբարձր ցուցանիշը դրսևորելով նախնական ՄԿՈՒ որակավորում ունեցողների շրջանում (զգալի աճ 2011թ. 17,8%-ից մինչև 24,8%), որին հաջորդում են միջին ՄԿՈՒ շրջանավարտները (18,4%), բարձրագույն և հետքրության (18,2%), միջնակարգ ընդհանուր (16,3%), հիմնական ընդհանուր (15,5%) ունեցողներն ու այլ կատեգորիաները (1,5%): Գործազրկության ցուցանիշում առկա է նաև գենդերային անհավասարություն. կանանց գործազրկությունն ավելի բարձր է (19,8% տղամարդկանց 16,4%-ի հետ համեմատությամբ):

Ոչ ֆորմալ զբաղվածության ցուցանիշը շարունակում է բարձր մնալ՝ 50,1% (2012թ.), այդ թվում՝ 24,1%-ը քաղաքային և 79%-ը գյուղական բնակչության շրջանում՝ ծագման ծանրակերպությունում աշխատողների 99%-ը և ոչ գյուղատնտեսական գործունեության մեջ ընդգրկվածների 19,3%-ը:

Գործազրկության մակարդակը երիտասարդների շրջանում (15-24 տարեկաններ) դեռևս ամենաբարձրն է՝ ընդհանուր գործազրկության մակարդակի կրկնակին (Աղյուսակ 2), սակայն առկա է նվազման որոշակի միտում: Երիտասարդների գործազրկության մակարդակը նվազել է 2011թ. 39,2%-ից մինչև 35,4%-ը 2012թ., մինչդեռ երիտասարդ կանանց դեպքում այն նվազել է 2011թ. 44,9%-ից մինչև 40,7%: Երիտասարդների գործազրկության ցուցանիշներն ավելի բարձր են քաղաքային բնակավայրերում և աճել են 2011թ. 47,3%-ից մինչև 50,2% 2012թ.: Տվյալները ցույց են տալիս, որ երիտասարդները բախվում են

⁸ Համաշխարհային բանկ, Հայաստանի գործընկերությունը, Երկրի ծրագրային պատկերը, 2012թ. ապրիլ

⁹ Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրությունը նկարագրող հիմնական ցուցանիշները՝ 2010-2012թթ., ՓՄՁԶԱԿ, 2012

¹⁰ Աշխատատեղերի սակավության պատճառով գործատուները կարող են աշխատանքի ընդունել բարձրագույն կրթությամբ շրջանավարտների ավելի ցածր հմտություններ պահանջող աշխատանքների համար՝ այսպիսով դարձնելով ՄԿՈՒ շրջանավարտներին առավել խոցելի ու պակաս գրավիչ աշխատաշուկայում:

դժվարությունների աշխատաշուկա մտնելիս, և որ իրավիճակը շարունակում է մնալ ավելի խնդրահարուց երիտասարդ կանանց համար, ինչպես նշված է Թուրքինի գործընթացի 2012թ. գեկուցում:


Աղյուսակ 2. Երիտասարդների (15-24 տարեկաններ) գործազրկության մակարդակը՝ ըստ սեռի և բնակավայրի (%)

		2010	2011	2012
Ընդհանուր		38,9	39,2	35,4
Սեռ	տղամարդ	31,9	34,9	31,5
	կին	48,0	44,9	40,7
Բնակավայրը	քաղաք	48,6	47,3	50,2
	գյուղ	23,9	27,1	14,4

Աղյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն, << աշխատաշուկան 2008-2012թթ.»

Ընդհանուր գործազրկության մակարդակում երկարաժամկետ գործազրկությունների մասնաբաժինն արձանագրել է աճի միտում 2009 թվականից, այսպիսով, 2012թ. գործազրկությունների ավելի քան կեսը (52,7%) երկարաժամկետ գործազրկություններ են եղել: Կանանց դեպքում աճի միտումն ավելի զգալի է:

Գծանկար 2. Երկարաժամկետ գործազրկությունը (12 ամիս +) որպես ընդհանուր գրաղվածության %



Աղյուրը՝ <<ԱՎԾ 2012»

2012թ. ընդհանուր 245.000 գործազրկություններից միայն 65.000 են պաշտոնապես գրանցված եղել Զբաղվածության պետական գործակալությունում (2011թ. նրանց թիվը կազմել է 70.000 մարդ), որոնցից 46.400-ը (71%) արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 11,2%-ը բնակվում են գյուղական բնակավայրերում: Բացի գործազրկություններից գրանցված են եղել նաև շուրջ 7.000 ավելի լավ աշխատանքի հնարավորություններ փնտրող աշխատողներ: Գրանցված գործազրկությունների փոքր թիվը կարելի է բացատրել նրանով, որ աշխատանքի որոնման կամ խորհրդատվության տրամադրման ՀՊԳ-ի ծառայությունները բնակչության կողմից նպատակային և արդյունավետ չեն համարվում:

Գրանցված գործազրկությունների շրջանում ամենամեծ մասնաբաժինն ունեն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողները (47%), որոնց հաջորդում են նախնական և միջին ՄԿՈՒ (30%)՝ բարձրագույն կամ հետքուիական (16,3%) և հիմնական ընդհանուր (6,7%) կրթություն ունեցողները:

2.2 Հմտությունների պահանջարկի և առաջարկի որոշարկման և դրանց համապատասխանեցման մեխանիզմները

2012թ. գրանցված գործազրկությունների գործը 50%-ը ստացել են որոշ ծառայություններ. գործազրկության նպաստ¹¹ են ստացել 35,5%-ը (որոնցից 63%-ը կանայք են եղել)¹² 2011թ. 55%-ի դիմաց, և մասնագիտական վերապատրաստում են անցել 3%-ը՝ 2011թ. 4%-ի դիմաց:

¹¹ Գործազրկության նպաստի միջին ամսական չափը. 16.031 դրամ = 29€, 2014թ. օգոստոսի 11

ՀՀ ԱՎԾ-ի 2012թ. Տարեգործի տվյալները ցույց են տալիս, որ գրանցված գործազրկների ընդհանուր թվի 15,7%-ն աշխատանքի են տեղավորվել 2012թ. (2,5%-ը գյուղատնտեսության, 25,9%-ը արդյունաբերության, 6,2%-ը տրանսպորտի և կապի, 11.4%-ը շինարարության, 54%-ը սպասարկման ոլորտներում): Գործազրկության միջին տևողությունը կազմել է 23,8 ամիս՝ գրեթե հավասար լինելով կանանց և տղամարդկանց համար: Գրանցված գործազրկների միջին տարիքը 42-ն է:

2012թ. գործատուների կողմից առաջարկվել է ընդամենը 1.689 թափուր աշխատատեղ (1 տեղ 38 դիմողի համար), ինչը ՀՊԳ-ի՝ որպես աշխատանքի որոնման գործիքի անբավարար տեսանելիության ցուցիչ է:

Ինչ վերաբերում է աշխատավարձերին ու եկամուտներին, առկա աշխատատեղերի զգալի մասի դեպքում չի վճարվում այնքան գումար, որպեսզի մարդիկ դուրս գան աղքատությունից¹²: Աշխատողների շուրջ 37,3%-ը աշխատում են գյուղատնտեսությունում, մինչդեռ այս ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում է ընդամենը 20% (2012թ.), և սա ցույց է տալիս, որ այստեղ արտադրողականության լուրջ խնդիր կա:

Միջին ամսական անվանական աշխատավարձը¹³ 2012թ. կազմել է 113.163 ՀՀ դրամ¹⁴, որը 2011թ. ցուցանիշը գերազանցում է 4,7%-ով: Կանանց աշխատավարձը 22%-ով ցածր էր միջինից: Կրթության բնագավառի աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է մոտ 80.000 ՀՀ դրամ, որն այս ոլորտը դնում է աշխատավարձի սանդղակի վերջից երրորդ տեղում՝ միայն մշակույթի և գյուղատնտեսության բնագավառների աշխատողներից առաջ:

Միջին ամսական եկամուտն¹⁵ աննշան բարձրացել է 2011թ. 78.408 դրամից՝ կազմելով 85.212 դրամ: Տղամարդկանց միջին ամսական եկամուտը կազմել է 104.874 դրամ՝ կանանց 61.853 դրամի դիմաց, և այն ավելի բարձր է եղել քաղաքացին, քան գյուղական բնակավայրերում ապրողների համար: Նվազագույն եկամուտը գրանցվել է գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում, մինչդեռ ամենաբարձրը՝ տրանսպորտի, կապի, ֆինանսների և բիզնեսի բնագավառներում: Նվազագույն եկամուտը մասնագիտական կրթության աշխատողներին է (64.246 դրամ), իսկ ամենաբարձրը՝ բարձրագույն և հետքուհական աշխատողներինը (105.135 դրամ): Միջին եկամուտը ֆորմալ զբաղվածության մեջ կազմում է 93.065, իսկ ոչ ֆորմալ 72.183 դրամ:

2014թ. հուլիսի 1-ից բարձրացել են քաղաքայողների աշխատավարձերը, և զուտ նվազագույն աշխատավարձը բարձրացել է մինչև 50.000 ՀՀ դրամ¹⁶ դրամ:

Ցածր եկամտի պատճառով աշխատողների շուրջ 3%-ն ունեն երրորդ աշխատանք, որից 89%-ը՝ գյուղատնտեսության սեկտորում:

Հմտությունների նկատմամբ պահանջարկի որոշարկման և կանխատեսման կանոնավոր համակարգը դեռևս բացակայում է: Ժամանակ առ ժամանակ հարցումներ և հետազոտություններ են կատարվում ՄԿՈՒ հաստատությունների, գործատունների միությունների և միջազգային կառույցների կողմից: Սակայն այս հարցումների և ուսումնասիրությունների որակն ու մեթոդները շատ տարբեր են, տեղեկությունների կիրառությունը պարզ չէ, անբավարար է համակարգումը: Հիշատակման են արժանի պետության կողմից ՄԿՈՒ և ԲԿ անվճար ուսուցման համար տրամադրվող ընդունելության տեղերի քվիտաները և ՀՊԳ-ի կողմից գործատունների հարցումների և գործազրկների գրանցման միջոցով իրականացվող աշխատաշուկայի վերլուծությունները:

Բացի այդ, մասնավորաբես երիտասարդների շրջանում գործազրկության բարձր մակարդակին, հակազդելու նպատակով 2014թ. հունիսին ընդունվել են նոր իրավական ակտեր և մշակվել են զբաղվածության բազմաթիվ ակտիվ միջոցառումներ: Վերջիններս կակասվեն իրագործվել 2015թ. և նախատեսում են նպաստել հատկապես երիտասարդների զբաղվածությանը: Դրանք ներառում են, ի թիվս այլոց, աջակցություն սկսնակ բիզնեսին, մասնագիտական կրթություն ու ուսուցում, աջակցություն

¹² Վերոհիշյալը

¹³ Ասվանական աշխատավարձն աշխատավայրի համախառն վարձատրության չափն է, ներառյալ՝ հարկերը: Տեղեկատվության աղյուրը հիմնված է կազմակերպությունների/ընկերությունների կողմից ներկայացված վիճակագրական հաշվետվության վրա, որն ընդգրկում է փոքր և միկրո ընկերությունների մշտադիտարկումը և ընտրանքային հետազոտությունը՝ իրականացված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

¹⁴ 113.163 դրամ = 205 €, 2014թ. օգոստոսի 11

¹⁵ Վերաբերում է աշխատողների կողմից ստացված զուտ եկամտի դրամական և բնախային եկամուտներին, և հիմնված է 15-75 տարեկան աշխատողների պատասխանների վրա: Հայլեսոու ժամանակաշրջանը հետազոտությանը նախորդող վերջին ամիսն է:

¹⁶ 50,000 դրամ = 90,57 €, 2014թ. օգոստոսի 11

ֆերմերներին սեղոնային աշխատանքը խթանելու համար, պրակտիկայի կազմակերպում ընկերություններում, միանվագ փոխհատուցում գործառուներին, միջոցառումների արդյունավետության մշտադիտարկում և գնահատում, և այլն: ՀՊԳ աշխատակազմը վերապատրաստվել է այս միջոցառումներն առավել ակտիվորեն իրագործելու նպատակով, իսկ տարածքային կենտրոններն ինտեգրվել են ԱՍՀՆ այլ ծառայություններին ռեսուրսներն առավել օպտիմալ օգտագործելու նպատակով:

Այնուամենայնիվ, 2014թ. գրաղվածության միջոցառումների համար նախատեսված ընդհանուր բյուջեն նվազել է 23%-ով: 2013թ. համեմատությամբ 35%-ով կրճատվել են պասիվ միջոցառումների և 65%-ով ավելացել ակտիվ միջոցառումների համար նախատեսված ծախսերը: Աշխատանքի որոնման առավել ակտիվ մոտեցումը խթանելու համար 2015 թվականից գրանցված գործազուրկներին գործազրկության ոչ մի նպաստ չի վճարվելու:

2.3 ՄԿՈՒ համակարգի՝ տնտեսության և աշխատաշուկայի կարիքների վրա ազդելու ներուժը

Չնայած հաստատությունների կողմից գործադրված հսկայական ջանքերին՝ տնտեսության և աշխատաշուկայի պահանջարկը, կարծես թե, դեռևս մեծ ազդեցություն չունի ՄԿՈՒ համակարգի գործունեության վրա: Առկա տվյալները, մասնավորապես դուրսների կողմից իրականացված հետամուտ հետազոտությունները, ցույց են տալիս, որ ՄԿՈՒ համակարգը հիմնականում խաղում է այնպիսի շրջանավարտների մատակարարի դեր, ովքեր կիրածեն մուտք գործել աշխատաշուկա:

Սա ակնհայտորեն աշխատատեղերի սակավության հետևանք է, քանի որ չնայած տնտեսության վերականգնման և որոշ բարելավումների նշաններին՝ առաջարկը փորձ է: Տնտեսության կառուցվածքում դեռևս գերիշխում են տնտեսության աշխատատար ոլորտները, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, հյուրանոցները, ռեստորանները և հանրարդյունաբերությունը, որտեղ ցածր մակարդակի հմտություններ են պահանջվում: Ակնհայտ է, որ գրաղվածության հնարավորությունները բարձրացնելու համար Հայաստանը պետք է ներգրավի ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա ներդրումներ և նպաստի նոր ընկերությունների ստեղծմանը նորարական ոլորտներում մրցակցային գործարար միջավայրի բարելավման միջոցով:

Աշխատուժի հմտությունները, կարծես թե¹⁷, մեծ խոչընդոտ չեն աշխատատեղերի ստեղծման համար, և գործատուները կարևորում են, որ բիզնեսի կարգավորման բարելավումը, բյուրոկրատիզմի կրճատումը, բիզնեսի բազմաթիվ ստուգումների և դրանց հետ կապված շորթումների սահմանափակումը գործարար միջավայրի բարելավման գերակա խնդիր դառնան:

2012թ. նոյեմբերին << կառավարությունը հավանություն է տվել << 2013-2018թթ. գրաղվածության ռազմավարությանն ու դրա իրականացման ծրագրին: Առանցքային գերակայություններից են՝

- գրաղվածության մակարդակի բարձրացումը ՓՄՁ-ի զարգացման արդյունքում 100.000 աշխատատեղերի ստեղծման միջոցով,

- Զբաղվածության պետական գործակալության կողմից մատուցվող ծառայությունների բարելավումը,

- ԿԳՆ-ի կողմից ՄԿՈՒ առաջարկի կազմակերպումը աշխատաշուկայի կարիքներին համապատասխան,

- Կրթության բարելավումը <<ՈՍՀ-ի գործարկման միջոցով,

- մասնագիտական կողմնորոշման համակարգի մատչելիության ապահովումը յուրաքանչյուր անձի համար՝ անկախ գրաղվածության կարգավիճակից և կարիերայից:

Ի լրում վերը նշված գերակայությունների, ռազմավարությունը բացահայտում է գրաղվածության խթանման ծրագրերի կարգավորման անհրաժեշտությունը խոցելի խմբերի համար և ներառում է ակտիվ աջակցություն աշխատանք փնտրողներին մասնագիտացված ծառայությունների մատուցման միջոցով, ինչպիսիք են՝ տեղեկատվությունը, խորհրդատվությունը, միջնորդությունը, տեղավորումը, պատրաստումն ու վերապատրաստումը, բիզնես սկսելը և այլն: Ռազմավարության մեջ ընդգրկված է գրաղվածության ակտիվ միջոցառումների համար նախատեսված բյուջետային հատկացումների ավելացում, ինչպես նաև առաջարկություն նվազագույն աշխատավարձի և թափուր աշխատատեղերի տարեկան աճի վերաբերյալ, որը կլացվի ՀՊԳ-ի աջակցությամբ:

Ռազմավարությունը կիրառվել է գրաղվածության մասին օրենքի ընդունման համար 2013թ., որը, ի լրում վերը նշված գերակայությունների, նախատեսում է հարմարեցված մոտեցումներ հատուկ թիրախային խմբերի համար (ինչպես օրինակ՝ ձեռնարկատիրական գործունեություն սկսելը, հաշմանդամների վերապատրաստումը, աշխատանքի վերականգմանը և որոնմանը օգնելը և այլն):

¹⁷ Արդյունավետ գրաղվածության խթանում, Հայաստան, ՀԲ փաստաթուղթ-2012թ. սեպտեմբեր

3.ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

3.1 ՄԿՈՒ պահանջարկը ձևավորող ժողովրդագրական և սոցիալական գործուները

Ըստ 2011թ. Հայաստանի մարդահամարի՝ 2013թ. հունվարին մշտական բնակչությունը կազմել է 3.027.000, որոնց 52%-ը եղել են կանայք, իսկ 48%-ը՝ տղամարդիկ: Եթե համեմատենք նոյն ցուցանիշը 2012թ. սկզբի ցուցանիշի հետ, բնակչությունն ավելացել է 5,5 հազարով՝ արտացոլուվ բնակչության բնական աճը (գրանցված ծնունդների և մահերի միջև տարբերությունը) և գնահատել է զուտ միգրացիայի մոտավոր ծավալները:

Բնակչության գրեթե 32%-ը 25 տարեկանից ցածր անձինք են եղել: 2001 թվականից այս միտումները բնութագրվել են բնակչության թվի աճի և նվազման իրար հաջորդող փուլերով, սակայն այս ժամանակահատվածի ընթացքում արձանագրվել է ընդհանուր 5,7% նվազում: Վերջին հինգ տարիներին բնակչության տարիքային կառուցվածքում նկատվել է երիտասարդների (մինչև 24 տարեկան) դանդաղ նվազում և մեծահասակ (25-64 տարեկան) աշխատանքային ոեսուրսների արագացված աճ: Բնակչության միջին տարիքը եղել է 36,2 տարեկան. տղամարդկանցը՝ 34,5, իսկ կանանցը՝ 37,8 տարեկան:

2013թ. սկզբին քաղաքային/գյուղական բնակչության մասնաբաժնները կազմել են 63% և 37%՝ համապատասխանաբար, քաղաքային բնակչության աննշան նվազման և գյուղական բնակչության աճի միտումներով¹⁸: Ընդհանուր բնակչության 35,2%-ն ապրում է Երևանում, կանանց ավելի մեծ մասնաբաժին ունեն քաղաքային բնակավայրերում (53%):

Երկարաժամկետ (մինչև 2050թ.) կանխատեսումները որոշարկել են փոփոխություն բնակչության տարիքային կառուցվածքում. աշխատունակ տարիքային խմբի (25-64 տարեկաններ) փոքրացում շուրջ 8%-ով և թոշակառուների մասնաբաժնի ավելացում՝ 8,5%-ով¹⁹: Սա կազդի ամբողջ հասարակության վրա ընտանիքի կախյալ անդամների տոկոսի, աշխատութի, առկա հմտությունների, սոցիալական և առողջապահական ծառայությունների մատուցման տեսանկյունից:

Արտագաղթը երկրում շարունակում է մնալ կարևոր գործոն՝ որպես աղքատության և գործազրկության հետևանք: Հաշվարկված է, որ ավելի քան 213.000 հայեր հեռացել են Երևանից 2007-2012թթ. ընկած ժամանակահատվածում, և 32.205 մարդ արտագաղթել է 2013թ: Հիմնական պատճառները դեռևս մնում են գրադարձության առկա իրավիճակն ու ցածր, ոչ գրավիչ աշխատավարձերը:

Երկար ժամանակով Ռուսաստան գաղթածները, ովքեր ապրում են այնտեղ մեկ տարի կամ ավելին, կազմում են հայ տարագիրների 70%-ը: Այդ երկրում առկա է շուրջ 800.000 հայ միգրանտ աշխատող²⁰:

Վերաբարձող միգրանտների վերաբերյալ ԵԿՀ ուսումնասիրությունը (2012թ.) ցույց է տալիս, որ նրանց 87%-ը Ռուսաստանից վերաբարձող տղամարդիկ են եղել: Նրանց մեծ մասն աշխատել են շինարարության, արտադրության և առևտուրի ոլորտներում: Մեծամասնությունը կատարել են ցածր սահմանափակ հմտություններ պահանջող և իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանքներ՝ կրթության մակարդակի հետ աճող ապարակավորման վրածը ռիսկով: Վերաբարձող միգրանտների 42%-ը կարողացել է գտնել աշխատանք, իսկ 68%-ը լրջորեն մտածել է հետ վերադառնալու մասին:

Արտագաղթողների դրամական փոխանցումներն աճել են՝ 2012թ. հասնելով ՀՆԱ-ի 21,5%-ի²¹, սակայն չեն նպաստել ներդրումներին, քանի որ երկրում իրականացված հարցման համաձայն՝ տնային տնտեսությունների միայն 12%-ն է գրաղվում բիզնեսով: Հետագա վերլուծությունները ցույց են տալիս, որ կարճաժամկետ հեռանկարում կատարված դրամական փոխանցումները դրական ազդեցություն են ունենում տնտեսության վրա, սակայն հակված են բացասական Երևանության դաշտում երկարաժամկետում, քանի որ դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունները սովորաբար աշխատաշուկայում ակտիվություն չեն դրսևորում:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ 2008-2012թթ. ընկած ժամանակահատվածում գյուղական համայնքներում միջին համախառն եկամուտն աճել է 16,8%-ով: Նման աճը հիմնականում Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացված մասնավոր տրանսֆերների արդյունք է:

Ռուսաստանի՝ ներգաղթի և օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին օրենքի վերջին փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2014թ. սկզբին, կարող են լուրջ ազդեցություն ունենալ հետագա միգրացիոն միտումների վրա: Ըստ այդ փոփոխությունների՝ Հայաստանի պետք է

¹⁸ Տես՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրը, 2012թ. <http://www.armstat.am/file/doc/99466623.pdf>

¹⁹ Տես՝ Eurostat, European Neighbourhood Policy Countries – Demography, 2011, <http://epp.ec.europa.eu/eurostat>

²⁰ Գաղիկ Եղանյան, Միգրացիոն պետական ծառայության պետ, հարցազրոյց «Առկայի» հետ, Երևան 12.02.2014թ.

²¹ Remittances: statistical accuracy and financial benefits, Աննա Պրոլորովա, ՀԲ, 2013թ. նոյեմբեր

Երկրների քաղաքացիներին (ումից մոտքի արտոնագիր չի պահանջվում) թույլատրվում է գտնվել Ռուսաստանում ոչ ավել, քան 90 օր յուրաքանչյուր 180 օր տևողությամբ ժամանակահատվածում, և սա կարող է լուրջ ազդեցություն ունենալ պարբերական միգրացիայի հնարավորությունների վրա:

2011թ. ԵՄ-ն և Հայաստանը ստորագրել են Շարժունության շուրջ գործընկերության համաձայնագիրը, որի նպատակն է խթանել օրինական շարժունությունը: Հատկանշական է, որ բացահայտված հատուկ կարիքների ցանկում է հավանական միգրանտներին ՄԿՈՒ տրամադրումը՝ աշխատանքային միջավայրին նրանց հմտությունների համապատասխանությունը խթանելու նպատակով²²: Ավելին, հմտությունների և որակավորումների ճանաչումը հեշտացնելու համակարգի մշակումը դարձել է գերակայություն: ԵՄ-ի և այլ դունորների կողմից ֆինանսավորված շատ ծրագրեր իրականացվում են շարժունության շուրջ գործընկերության ներքո և հիմնականում ներառում են վերադարձող միգրանտների ինտեգրման աջակցության գործողություններ:

ԵՄ-Հայաստան վիզայի ռեժիմի հեշտացման մասին համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ին: Այն Հայաստանի մի շարք՝ առավելապես շատ ճամփորդող քաղաքացիների համար ավելի հեշտ և էժան կրարձնի կարճաժամկետ վիզաների ծերթերումը: Ճամփորդողների որոշակի կատեգորիաների համար և որոշ պայմաններում անդամ պետությունները նախատեսում են տրամադրել բազմակի մուտքի վիզաներ՝ երկարաժամկետ վավերականությամբ:

2013թ. հունվարից ԵՄ քաղաքացիներն արդեն ազատված են վիզա ունենալու պահանջից Հայաստան ճամփորդելիս:

Սիրիայում տեղի ունեցող հակամարտությունը հանգեցրել է շուրջ 10.000 սիրիահայերի ներգաղթին Հայաստան: Նրանք փնտրում են ինտեգրման աջակցություն, ինչպիսիք են՝ կրթությունը, աշխատանքի հնարավորություններն ու ուսուցումը: Հայաստանը ներկայում բախվում է այս բոլոր մարտահրավերներին, որոնք ազդում են սոցիալ-տնտեսական քաղաքականությունների վրա:

3.2 Սովորողների անհատական պահանջմունքների և ձգտումների բավարարումը.

մատչելիություն, ընդգրկվածություն, առաջընթաց

Բնակչության կրթական մակարդակը (Այլուսակ 3) բացահայտում է նախնական և միջին մասնագիտական կրթության կանոնավոր՝ շուրջ 25% մասնաբաժինը, որը կայուն է մնացել վերջին երկու տարիների ընթացքում: Ավելին, աննշան աճ է գրանցվել բարձրագույն կրթության համար (2010թ. 18,6%-ից մինչև 21,2%՝ 2012թ.): Կանանց ավելի մեծ թվի մասնակցությամբ (21,7% կանայք 20,5% տղամարդկանց դիմաց): Ի համեմատ հանրակրթության (2012թ. 42,2%-ից մինչև 41,7%՝ 2011թ.), ընդգրկվածությունը ՄԿՈՒ-ում (ներառյալ՝ նախնական և միջին) մնում է կայուն՝ առանց էական փոփոխությունների (2011թ. 25%-ից մինչև 24,8% 2012թ.):

Պարտադիր կրթության տևողությունը 9 տարի է, և այն իր մեջ ներառում է տարրական և հիմնական ընդիհանուր կրթությունը:

Այլուսակ 3. Բնակչության կրթական մակարդակը՝ ըստ սեռի (%), 15-75 տարեկաններ

	2010		2011		2012	
	Ընդամենը	Կանայք	Ընդամենը	Կանայք	Ընդամենը	Կանայք
Տարրական,թերի տարրական	2,0	2,1	1,7	1,7	1,5	1,5
Հիմնական ընդիհանուր	10,3	8,8	10,2	8,4	10,4	9,1
Միջնակարգ լրիվ ընդիհանուր	43,9	41,8	41,7	40,8	42,2	40,6
Նախնական մասնագիտական	2,2	1,9	1,9	1,6	2,1	1,6
Միջին մասնագիտական	22,9	25,9	23,1	25,5	22,7	25,5
Բարձրագույն հետրուհեական	18,6	19,4	21,3	22,0	21,2	21,7

Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության աշխարհուկան 2008-2012թթ.՝

Մինչև վերջերս հայկական հասարակությունն ավանդաբար հակված էր նախապատվությունը տալ բարձրագույն կրթությանը գրավիչ աշխատանք (մասնագիտապես պետական սեկտորում) գունելու ավելի լավ հնարավորությունների ակնկալիքով²³, ինչպես նաև հասարակության կողմից կրթության այս

²² Հմտությունների ձևավորումն ու դրանց ճանաչումը առաջարկված են որպես քննարկման առարկա:

²³ Պետական հատվածում (պետական կառավարում, կրթություն և առողջապահություն) աշխատանքով է ապահովում բարձրագույն կրթություն ստացածների 45%-ին համար, մինչդեռ արտադրության ոլորտում աշատում են

մակարդակի ավելի մեծ արժեքորման պատճառով: 2012/2013 ուսումնական տարում 24.597 ուսանողներ ավարտել են համալսարանները, և սա 37%-ով գերազանցում է նախորդ հինգ տարվա, 2,3 անգամ՝ նախորդ 10 տարվա և 2,5 անգամ՝ նախորդ 15 տարվա արդյունքները: Բարձրագույն կրթության որակն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով 2012թ. ներդրվել է հավատարմագրման համակարգ, որը հանգեցրել է համալսարանների թվաքանակի կրճատմանը 1997/1998թթ. 103-ից մինչև 65՝ 2012/2013թթ²⁴:

3.3 Սոցիալ-տնտեսական և ընդգրկվածության պահանջարկի ներկայացումը

2012թ. տնտեսական աճը, կազմելով 7,2%, հանգեցրել է որոշ չափով աղքատության կրճատման, որը Հայաստանում տնտեսական բարեկեցության ցուցանիշի հիման վրա գնահատվում է սպառման ազրեգաված: Աղքատ են գնահատվում նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության վերին՝ ընդհանուր գծից, շատ աղքատ՝ նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության ստորին՝ ընդհանուր գծից, իսկ ծայրահեռ աղքատ՝ նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության պարենային գծից: Աղքատության ցուցանիշը 2012թ. կազմել է 32,4%՝ նվազելով նախորդ տարվա 35%-ի համեմատ 2,6%-ով: Ծայրահեռ աղքատության մակարդակը նվազել է 2011թ. ցուցանիշից 3,8%-ով՝ հասնելով 2,8%-ի: 2012թ. բնակչության գրեթե յուրաքանչյուր երրորդ անգը (32,4%) աղքատ էր, 13,5%-ը՝ շատ աղքատ էր, իսկ 2,8%-ը՝ ծայրահեռ աղքատ:

Չնայած թե՛ աղքատության մակարդակը, թե՛ սրությունը 2012թ. նվազել են 2011թ. համեմատ. դրանք դեռևս ավելի բարձր են 2008թ. համեմատ: Աղքատների թիվը 2012թ. կազմել է շուրջ 980.000 (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), շատ աղքատներինը՝ 408.000 և ծայրահեռ աղքատներինը՝ մոտ 85.000 մարդ: Աղքատությունը շատ չի տարբերվում ըստ քաղաքային (32,5%) և գյուղական (32,1%) բնակավայրերի: 2012թ. ծայրահեռ աղքատության ամենացածր մակարդակն արձանագրվել է Երևանում, և ծայրահեռ աղքատների մեծ մասը քաղաքանակներ էին (73%):

Այս իրավիճակը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսությունը կարևոր դեր է խաղում մարդկանց ծայրահեռ աղքատությունից պաշտպանելու գործում, և որ թիրախավորված ծրագրերի, այդ թվում՝ հմտությունների զարգացման շնորհիվ աճող արտադրողականությունը կարող է տնտեսական աճի հնարավորություն լինել: Ինչ վերաբերում է աղքատությանը ըստ մարզերի, ապա՝ 2012թ. Հայաստանում ամենաաղքատն էր Շիրակը (աղքատության գծից ցածր էր բնակչության մոտ 46%-ը)՝ բարձր լեռնային մարզ՝ ավերված 1988թ. Երկրաշրջից: 2008-2012թթ. միջև ընկած ժամանակահատվածում աղքատության մակարդակն աճել է բոլոր մարզերում՝ բացառությամբ Երևանի և Վայոց ձորի:

Ինչ վերաբերում է աղքատության կառուցվածքային պատկերին, կանաց մասնաբաժնը բնակչության թվաքանակի մեջ կազմել է 54,9%, իսկ տղամարդկանցը՝ 45,1%՝ նախորդ տարվա համեմատ աննշան կրճատմամբ: Երեխներ ունեցող տնային տնտեսություններն աղքատության բարձր ռիսկի են ենթարկված, և թիրախային ծրագրերը նախատեսված են այդ հարցերին անդրադառնալու համար:

Աղքատության և ծայրահեռ աղքատության մակարդակն ավելի բարձր է փոքր և միջին բնակավայրերում: 2012թ. այն կազմել է 25,6% Երևանում, և 40,2%՝ այլ քաղաքներում:

Մշտական կարևոր դեր է խաղում աղքատության մակարդակի պայմանավորման գործում: Մասնավորապես, զբաղվածության մակարդակի անբավարությունը մեծացնում է աղքատ կամ ծայրահեռ աղքատ դառնալու ռիսկը: Սրա վկայությունն է այն փաստը, որ 2012թ. աղքատության մակարդակն աշխատող անդամ չունեցող տնային տնտեսություններում կազմել է 44,5%, որն ավելի բարձր է, քան ազգային միջինը: Նոյն ժամանակահատվածում ծայրահեռ աղքատության մակարդակն աշխատող անդամ չունեցող տնային տնտեսություններում կազմել է 4,8%, որն ազգային միջինից բարձր էր 1,8%-ով: Սակայն, 2008-2012թթ. միջև ընկած ժամանակահատվածում աղքատության մակարդակն աճել է թե՛ աշխատաշուկայի մասնակիցների, թե՛ ոչ մասնակիցների, այսինքն՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության շրջանում (օրինակ՝ աղքատությունը ուսանողների շրջանում 2008թ. կազմել է 24,2% և աճել է մինչև 31,5% 2012թ.):

Կրթությունն ու հմտությունները կարևոր դեր են խաղում մարդկանց աղքատությունից դուրս պահելու գործում, ինչպես ներկայացված է Այլուսակ 4-ում: Ակնհայտ է, որ կրթության բարձր մակարդակ ունեցող մարդկանց աղքատ լինելն ավելի թիվ հավանական է: Աղքատության մակարդակը բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում կազմում է ազգային միջինի (30,5%) գրեթե կեսը (17,4%): Ֆինանսական

համալսարան ավարտածների ընդամենը 4,5%-ը, իսկ SCS ոլորտում՝ 4,4%-ը: Promoting Productive Employment, Armenia, ՀԲ, 2012թ. սեպտեմբեր:

²⁴ Հայաստանի դրամական գելուց 2013. Մարդկային կապիտալի և ամի հեռանկարներ, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (ՏԶՀԿ), Երևան, Հայաստան, 2013թ. դեկտեմբեր

ճգնաժամի ընթացքում (2008-2010թթ.) աղքատության մակարդակը բոլորից շատ աճել է միջին ՄԿՈՒ կրթամակարդակ ունեցողների շրջանում՝ վկայելով որակավորված աշխատուժի համար համապատասխան աշխատանք գտնելու դժվարության մասին: 2008թ. համեմատ՝ ծայրահեղ աղքատությունն աճել է կրթական բոլոր մակարդակներում՝ բացառությամբ տարրական և նախնական կրթության (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Աղքագրություն՝ ըստ կրթական մակարդակների, 2008 և 2012թթ. (%), 16 տարեկան և բարձր դարիքի բնակչություն

	Աղքատություն		Ծայրահեղ աղքատություն	
	2008	2012	2008	2012
Տարրական	36,1	35,2	4,2	4,2
Հիմնական ընդհանուր	40,1	41,5	3,2	4,8
Միջնակարգ լրիվ ընդհանուր	30,2	36,5	1,7	3,1
Միջին ՄԿՈՒ	21,9	29,8	1,0	2,1
Բարձրագույն կրթություն	14,7	17,4	0,4	1,2
Ընդհանուր	26,6	30,5	1,6	2,8

Աղյուսակ 4 Տեսական տվյալների կենսամակարդակի ամրողացված հետազոտություն, <<ԱՎԾ (2008-2012)

Առկա տվյալները ցույց են տալիս, որ եկամուտներն ավելի բարձր են լավ կրթված և բարձր որակավորում ունեցող աշխատողների, քան թիվ կրթվածների համար: Ընդ որում, լավ կրթված անհատներն ունեն գործազրկության ավելի ցածր մակարդակ և տևողություն, քան թիվ կրթվածները: Ինչ վերաբերում է վաստակին, բարձրագույն և հետքուհական կրթություն ունեցողները վաստակում են առնվազն կրկնակի ավել, քան հիմնական ընդհանուր կրթություն ունեցողները: Սակայն նշանակալից է կրթության այս մակարդակն ունեցող անձանց վաստակի աննշան կրճատումը 2011թ. համեմատ, մինչդեռ մյուս բոլոր կատեգորիաների համար աճի միտում է գրանցվել:

Ակնհայտ է, որ ամենալուրջ սոցիալական մարտահրավերը տնտեսական բաժանումն է քաղաքային և գյուղական բնակավայրերի և մարզերի միջև ենթակառուցվածքների (արդյունաբերական) և աշխատանքի հնարավորությունների առումով: Աղքատության կրճատման ամենահրատապ հիմնահարցերից մեկը միջնակարգ ընդհանուր կրթության և ՄԿՈՒ մեջ ընդգրկվածության բարձրացումն է՝ որպես տնտեսական և սոցիալական շարժունության և համախմբվածության բարելավման միջոց: Այսպիսով, հատուկ խմբերի կարիքներին անդրադառնալու նպատակով պետք է մշակվեն և իրականացվեն թիրախավորված ծրագրեր:

4.ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՁԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Որակի ապահովում

ՄԿՈՒ համակարգում հաստատությունների կատարողականը գնահատելու որևէ մեխանիզմ չկա: 2008թ. Հայաստանում ստեղծվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՊԱԱԿ), որը պատասխանատու է թե՛ բարձրագույն, թե՛ նախնական ու միջին մասնագիտական կրթության համար: Այն առաջին քայլերն է կատարում որակի ապահովման չափորոշիչների և չափանիշների սահմանման ուղղությամբ: Սակայն, Կենտրոնն իր գործունեությունն առայժմ կենտրոնացրել է հիմնականում բարձրագույն կրթության վրա (մշակվել է Անցումային ժամանակաշրջանի (2011-2015թթ.) ռազմավարական ծրագիր): ՊԱԱԿ-ը սահմանել է ինստիտուցիոնալ որակի ապահովման համակարգի գործընթացը երեք փուլերով՝ (i) ինքնագնահատում, (ii) գնահատում վերապատրաստված արտաքին գնահատողների կողմից և (iii) հաշվետվության պատրաստում/հրապարակում (որպես առաջին երկուսի ամփոփում)²⁵:

Վերջերս դոնորների աջակցությամբ մշակվել է ՄԿՈՒ նոր օրենք, որի նպատակն է ապահովել որակի առավել արդյունավետ վերահսկողության համակարգ, սակայն այդ օրինագիծը դեռևս քննարկման փուլում է: 2011թ. ընդունված Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը (ՀՈԱՇ) հետևում է որակավորումների եվրոպական շրջանակի (ՊԵՇ) կառուցվածքին և համարվում է բարեփոխումների առանցքային գործիք, որի նպատակն է բարելավել որակը կրթության և ուսուցման ազգային համակարգում: Քանի որ մակարդակների նկարագրերը ՀՈԱՇ-ում կազմում են պետական կրթական

²⁵UNESCO-IBE (2011), “World Data on Education: Armenia”. VII Հրատարակություն. 2010/11թթ. – Ժնև, ՅՈՒՆԵՍԿՕ-ԿՄՊ

չափորոշիչների մշակման հիմքը, իրականացման փուլում առկա կրթական ծրագրերն անհրաժեշտ կլինի վերանայել՝ ըստ այս նկարագրերի: ԿԳՆ-ն վերջերս ստեղծել է աշխատանքային խոմբ՝ որակավորումների ազգային դասակարգիչը (մասնագիտությունների ցանկը) վերանայելու նպատակով: Նախարարությունը կարևորում է սովորողների ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների տեսանկյունից միջնակարգ ընդհանուր, նախնական և միջին մասնագիտական կրթության հաջորդական ուղեգիծ ապահովելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է ՄԿՈՒ պլանավորմանն ու ընդգրկվածությանը, այն հիմնված է ԿԳՆ-ի կողմից արձակված հրամանների վրա, որոնք հաշվի են առողջ հաստատությունների կարողությունները, ինչպես նաև այլ կազմակերպություններից, ինչպես, օրինակ՝ ԱՍՀԵ-ից կամ ՀՊԳ-ից ստացված աշխատաշուկայի հնարավոր պահանջարկի մասին տեղեկությունները: ՄԿՈՒՀԱԿ-ը վերահսկում և ուղղորդում է ընդհանուր գործունեությունը:

Պլանավորումը հիմնված է նաև Միջնաժամկետ ծախսների ծրագրի վրա (ՄԺԾԾ), որն ապահովում է բյուջետային հատկացումները բոլոր պետական հաստատություններին, այդ թվում՝ ԿԳՆ-ին և ՆՄՄԿ վարչությանը: Կրթության համար նախատեսված բյուջեն հիմնված է մեկ շնչին բաժին ընկնող ֆինանսավորման վրա:

Թեև ՄԿՈՒ գնահատման համակարգային մոտեցում չկա, սակայն ՄԿՈՒՀԱԿ-ը վերջերս իրականացրել է բարեփոխումների, այդ թվում՝ նոր ուսումնական պլանների կիրառման, ուսուցիչների վերապատրաստման, քոլեջների կառավարման խորհուրդների աշխատանքի և այլ հարցերի մշտադիտարկման տեսանցում: Այս վերանայումների հաշվետվությունները, ներառյալ արդյունքներն ու առաջարկությունները, ներկայացվում են ԿԳՆ ՆՄՄԿ Վարչություն:

Քոլեջներն ու ուսումնարանները յուրաքանչյուր մասնագիտության (որակավորման) դասավանդման համար ունեն ԿԳՆ-ի կողմից տրամադրած լիցենզիա, և նույնը վերաբերում է ցանկացած փոփոխության, որը հաստատությունը ցանկանում է ներդնել: Լիցենզավորումը հիմնված է դասավանդողների կարողությունների և ֆիզիկական պայմանների, այն է՝ դասասենյակների, սարթավորումների, ինչպես նաև տեղական աշխատաշուկայում համապատասխան որակավորումների պահանջարկի վերաբերյալ քոլեջի կողմից ներկայացվող վկայությունների վրա:

Դուռըներն օժանդակել են համակարգի որակի բարելավմանը, և այս առումով հարկ է նշել հետևյալ միջամտությունները:

(i) ԵՄ-ն շարունակում է մնալ ՄԿՈՒ բարեփոխումների հիմնական դրոնորը բյուջետային աջակցության միջոցով՝ շուրջ 40 միլիոն եվրո դրամաշնորհ 2007թ. մինչև 2013թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում: Բարեփոխումների ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել ազգային իշխանություններին ՄԿՈՒ համակարգի հեղինակությունը բարձրացնելու և ենթակառուցվածքի և բովանդակության արդիականացման միջոցով պայմանները բարելավելու գործում:

ԵՄ-ի աջակցությամբ ՄԿՈՒՀԱԿ-ի կողմից մշակվել է 100 կրթական չափորոշիչ՝ զբաղվածության կողմը ներկայացնող և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությունն ապահովող ոլորտային հանձնաժողովների հետ համագործակցությամբ: Այս չափորոշիչները հիմնված են կարողությունների վրա և կառուցված են մոդուլներից, ներառյալ ուսումնառության արդյունքներն ու կատարման չափանիշները: Դրանք ներառում են հանրակրթական առարկաներ, առանցքային հմտություններ, ինչպես նաև ոլորտի համար ընդհանուր և հատուկ մասնագիտական հմտություններ, այդ թվում՝ տեսություն և պրակտիկա: Կառուցվածքը սահմանում է նաև տեսության և պրակտիկայի համար նախատեսված շաբաթների ժամերի քանակը:

Աջակցությունը կենտրոնացված է հիմնականում 12 բազմագործառությային քոլեջների (մեկական՝ յուրաքանչյուր մարզում և 2-ը՝ Երևանում) արդիականացման, վերանորոգման ու վերագինման վրա, որոնք այդպիսով դառնում են ողջ համակարգի զարգացման մոդելներ: 2011թ. քոլեջները վերակազմակերպվել են որպես ՏՊԲ-ներ: Քոլեջների հիմնական նպատակն էր դառնալ ինքնավար ուսումնական հաստատություններ՝ ազգային և մարզային համատեքստերում ավելի մեծ բիզնես-ուղղվածությամբ: ՏՊԲ-ները ստեղծել են ցանցեր այլ քոլեջների հետ և առաջատար դեր են խաղացել ՄԿՈՒ ոլորտի առաջխաղացման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետների պատրաստման գործողությունների (օրինակ՝ հրազելության բարձրացում, ուսուցում, աշխատակազմի որակավորումների կատարելագործում, դասավանդողների և արտադրական ուսուցման վարպետների գնահատում) իրականացման գործում: Նրանց զարգացումը, սակայն, մեծապես կախված է երկրի մասնավորապես յուրաքանչյուր կոնկրետ մարզի ընդհանուր տնտեսական զարգացումից: Ներդրումը մարդկային ռեսուրսների զարգացման մեջ կարևոր է, սակայն հաջողությունը կախված է ընդհանուր

տնտեսական աճի համար անհրաժեշտ ավելի մեծ ներդրումներից: Վերջերս բյուջետային աջակցության ծրագրում ներառվել են նաև արիեստագործական ուսումնարանները, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացմանն ու կարիերայի ուղղորդմանն ուղղված և այլ գործողություններ:

(ii) ՄԱՀԾ-ն նույնպես շատ ակտիվ է եղել ՄԿՈՒ բարեփոխումների ոլորտում Դանիայի կառավարության կողմից մինչև 2013թ. տրամադրված ֆինանսական աջակցության միջոցով: Այս աջակցության թիրախը եղել է սարքավորումների տրամադրումը, ծրագրերի մշակումը, գործող օրենսդրության վերանայումը և այլն:

(iii) Համաշխարհային բանկը շուրջ 20 տարի եղել է իմանական դոնորը հանրակրթության ոլորտում աջակցություն տրամադրելով վերանորոգման, վերազինման, ծրագրերի մշակման, SS արդիականացման և այլ խնդիրների համար:

iv) 2012-2013թթ. ընկած ժամանակահատվածում ԳՄՀՀԸ-ն (GIZ) իրականացրել է հետևյալ գործունեությունները՝

- իրականացվել է «Էլեկտրոնային ուսուցման ինստիտուցիոնալ կառուցում և մարդկային ռեսուրսների զարգացում Հարավային Կովկասում» նախագիծը, որի շրջանակներում էլեկտրոնային ուսուցումը կիրառվել է ՄԿՈՒ ոլորտի դասավանդողների վերապատրաստման, ուսումնական պլանների արդիականացման և, ընդհանուր առմամբ, կրթության որակի բարելավման համար:

- աջակցություն ԿԳՆ-ին Գերմանիայում կայացած «Համաշխարհային հմտություններ» 42-րդ միջազգային մրցույթին մասնակցելու նպատակով: Հայաստանի ազգային թիմը մասնակցել է 3 ոլորտներում ուսկերչություն, խոհարարություն և դիզայն (նորաձևություն):

- մշակվել է մասնագիտական կրթության դասավանդողների կրթական չափորոշիչը՝ նպատակ ունենալով վերանայել առկա ուղեցույցների և մոնղովների բովանդակությունը:

- իրականացվել է Հայաստանում գինեգործության և զրոսաշրջության ոլորտների հմտությունների զարգացման կառուցների ստեղծման նպատակահարմարության հետազոտություն, որը արդյունքները հասանելի կլինեն 2014թ. աշնանը:

Ավարտին է մոտենում GIZ-ի և ԿԳՆ-ի միջև 2014-2017թթ. համագործակցության ընդհանուր համաձայնագրի մշակումը:

4.2 Քաղաքականություններ ՄԿՈՒ դասավանդողների և տնօրենների համար

ՄԿՈՒ հաստատություններում դասավանդման և ուսումնառության միջավայրի նկատմամբ նվազագույն պահանջները սահմանված են ԿԳՆ-ի կողմից լիցենզավորման և հավատարմագրման չափորոշիչներով: 2011թ. ՄԿՈՒ հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի 81%-ն ունեցել է բարձրագույն կրթություն, սակայն ընդհամենը շուրջ 1%-ը՝ գիտությունների թեկնածու կամ ավելի բարձր գիտական աստիճան: ՄԿՈՒ դասավանդողների աշխատավարձերը վերջերս բարձրացել են, սակայն դեռևս շարունակում են ազգային միջինից ցածր մնալ՝ դարձնելով դասավանդողի մասնագիտությունը ոչ այնքան գրավիչ ու անհետաքրքիր:

Մոտիվացված և որակյալ դասավանդողների դեր՝ որպես բարեփոխումների գործընթացին առանցքային օժանդակողներ, շարունակում է կարևոր մնալ, սակայն միշտ չէ, որ այս հանգամանքը պատշաճ ուղարկության է արժանանում: Ուսումնառության և գնահատման գործընթացում նորարարության հաջող ներդրումը, հաստատությունների առավել գործուն մասնակցությունը տեղական սոցիալական և տնտեսական զարգացմանը և կառուցղական փոխազդեցությունը սոցիալական գործընկերների հետ մեծապես կախված են դասավանդողների, ուսուցանողների և տնօրենների պատշաճ ներգրավումից:

Հաշվի առնելով, որ միջին ՄԿՈՒ-ն մինչ այժմ հիմնականում ֆինանսավորվում էր ուսման վարձավճարների հաշվին՝ քոլեցների տնօրեններն ազատ էին դասախոսներ վարձելու գործում՝ որպես հիմք ընդունելով ուսանողների թիվը: Այս կերպ որոշ չափով սահմանափակվում էր գործընթացի թափանցիկությունը, որն ուղեցվում էր որակի կորսադիր դիսկով, և վերջինս կանխելու նպատակով ՄԿՈՒԶԱԽ-ը հավանություն տվեց Մասնագիտական ուսումնական հաստատությունների խորհրդական կողմից հաստատությունների դեկավարների և դասավանդողների գնահատման միջոցառումների և նրանց հնարավոր տույժերի ենթարկելու և խրախուսման, այդ թվում՝ ֆինանսական շահադրդման ներքին կանոնակարգերի մշակման վերաբերյալ երաշխավորություններին:

Որպես ԵՄ բյուջետային աջակցության մաս՝ իրականացվել է մոտ 4.000 դասախոսների ու արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստում նոր կրթական չափանիշների և ուսումնական պլանների կիրառման թեմաներով: ՄԿՈՒ ոլորտի մասնագետների համար մշակվել և

հրատարակվել են ձեռնարկներ, դասավանդման նյութեր և մոդուլային ծրագրեր: Իրականացվել են նաև հանրային իրազեկության բարձրացման աշխատանքներ:

Վերջերս ներդրվել է քոլեցների տնօրենների ատեսավորման և հավատարմագրման համակարգ՝ քոլեջի կառավարման համար անհրաժեշտ կարողությունների առկայությունը երաշխավորելու համար:

2014թ. մարտից սկսած ԱՄԿ-ն և Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցը ԱՄԿ-Ռուսաստան «Քսանյակի (G20) մասնագիտական ուսուցման ռազմավարության իրականացում» նախագծի շրջանակներում որոշ հաստատություններում կազմակերպել են հեռավար ուսուցման միջոցով «ՏՏԿՈՒ հաստատությունների կառավարում» համակարգչային սիմուլացիայի գործիքի փորձարկում տնօրենների համար:

Այս ծրագիրը կարող է գործածվել նաև ԱՄԿ-ի Քսանյակի մասնագիտական ուսուցման ռազմավարության մեթոդաբանությունն ու գնահատման ցուցանիշները կիրառող մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ որպես ինքնագնահատման գործիք:

4.3 Դասավանդում և ուսումնառություն

2005թ. սկսած յուրաքանչյուր տարի վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվում դասավանդողների շուրջ 20%-ի համար, իսկ մինչև 2011թ. վերապատրաստման դասընթացներին մասնակցել է դասավանդողների 74%-ը: Սակայն, ծերացման խնդիրը և որակյալ դասավանդողների արտահոսքը արտացոլում են մանկավարժի մասնագիտության և կրթության համակարգում աշխատատեղերի ցածր մրցունակությունը: Ուսուցիչների միջին տարիքը 55 տարեկանն է, և վեց դասավանդողից մեկը թշչակառու է:

Դասավանդողների գեներացին կազմը ցույց է տալիս մեծ անհավասարություն. կանայք գրադեցնում են աշխատատեղերի շուրջ 80%-ը պետական, և 70%-ը՝ մասնավոր ուսումնական հաստատություններում: Ավանդական գործուները, ինչպիսին է, օրինակ՝ ցածր աշխատավարձը, մեծապես ազդում են այս մասնագիտության գրավչության մակարդակի վրա տղամարդկանց՝ մասնավորապես տնային տնեսությունների համար պատասխանատվություն կրողների համար:

ՄԿՈՒ համակարգում բացակայում է դասավանդողների և դեկանների դասակարգման համակարգը:

Դասավանդողների մասնագիտական կրթությունը (հանրակրթական դպրոցների համար) տրամադրվում է Պետական մանկավարժական համալսարանի և ՄԿՈՒ քոլեցների կողմից:

ՄԿՈՒ համակարգում դասավանդողների պատրաստման և վերապատրաստման համակարգը բարեփոխվում է, սակայն այն առայժմ թույլ է և թերի: Դեռևս պետք է բարելավվեն ՄԿՈՒ ոլորտի դասավանդողների կարողություններն ու հմտությունները սահմանող չափորոշիչները, որակի ապահովման շրջանակը և մասնագիտացված ուսումնական հաստատությունները: Դասակարգիչներում առայժմ բացակայում են «ՄԿՈՒ դասավանդող» մասնագիտությունն ու որակավորումը:

4.4 Ուսուրսների օգտագործման արդյունավետությունը


Վերջին տարիների ընթացքում ՄԿՈՒ հաստատությունների թիվը նվազեցվել է՝ համակարգը ռացիոնալացնելու և այն առավել արդյունավետ դարձնելու մտադրությամբ: Ինչպես ներկայացված է այդուսակ 5-ում, ՄԿՈՒ-ն մեկ ուսանողի հաշվով ավելի թանկ է, քան հանրակրթությունը, և դա պայմանավորված է, ի թիվս այլոց, դասավանդող/ուսանող հարաբերակցությամբ, որը շատ ցածր է, և սարքավորումների, նյութերի, շենքերի բարձր արժեքով: ԿԳՆ-ն լիովին գիտակցում է խնդիրը և իրավիճակը բարելավելու պատասխանատվություն է ստանձնել: Սա կարող է ներառել որոշ հնացած հաստատությունների վերացումը և ՄԿՈՒ իրականացման համար այլ առանձին, ամբողջությամբ չօգտագործվող, օրինակ՝ հանրակրթական դպրոցները կամ նույնիսկ համալսարանների մասնաճյուղերի շենքերից օգտվելը: Սա, բնականաբար, հետևանքներ կունենա ինստիտուցիոնալ պատասխանատվության, համակարգման, դասավանդողների թվաքանակի և աշխատաշուկայի պահանջարկի տեսանկյունից: ՄԿՈՒ բարեփոխումների առկա ծրագիրը, որն ընդգրկում է մինչև 2016թ. ընկած ժամանակահատվածը, պետք է վերանայվի՝ հաշվի առնելով վերոնշյալ բոլոր խնդիրները:

Աղյուսակ 5. Տարեկան պետական ծախսերը մեկ սովորողի հաշվով պետական կրթական համակարգում, 2008-2011թթ.

	2008		2009		2010		2011	
	Դրամ	Միաժամկետ ընդունություն %						
Տարրական և միջնակարգ ընդհանուր կրթություն	144.063	13	182.145	18,6	186.309	16,8	181.381	15,1
Տարրական	138.458	12,5	166.218	16,9	159.617	14,4	179.449	15,0
Միջնակարգ	146.202	13,2	188.910	19,3	201.893	18,3	182.460	15,2
Նախնական և միջին ՄԿՈՒ	304.335	27,5	347.422	35,4	343.595	31,1	373.103	31,1
Նախնական ՄԿՈՒ	347.919	31,5	344.292	35,1	310.035	28	366.059	30,6
Միջին ՄԿՈՒ	282.337	25,6	349.414	35,6	368.451	33,3	377.460	31,5
Բարձրագույն կրթություն	354.930	32,1	398.301	40,6	401.896	36,3	455.271	38,0

Աղյուսակ՝ՀՀ 2015-2025, էջ 109

Գծանկար 3. ՄԿՈՒ համար նախադեսված պետական բյուջեփային հարկացումները 2010-2014թթ. ընկած ժամանակահարվածում



5. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅԱՆ ԻՐԱԿԱՆՑՈՒՄԸ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

5.1 ՄԿՈՒ տեսլականի սահմանումը և ռազմավարության

ԿԳՆ-ի ՆՄՄԿ վարչությունը փոփոխությունների շարժանիվն է և պատասխանատու է ոլորտի տեսլականի և ռազմավարության սահմանման համար, որը հիմնված է նաև արտասահմանյան փորձի, օրինակների և տեղեկատվության վրա:

Վարչությունը լիովին գիտակցում է, թե ՄԿՈՒ համակարգն արդիականացնելու և այն հայ հասարակության համար առավել համապատասխան ու գրավիչ դարձնելու համար ինչ փոփոխություններ են անհրաժեշտ, և ստանձնել է դրանց իրականացման պատասխանատվությունը: Սակայն վարչությունը գիտակցում է նաև իրականությունը և ռեսուրսների, աշխատակազմի, մտածողության սահմանափակումները և ընդունում է, որ փոփոխությունները պետք է կատարվեն քայլ առ քայլ՝ ունենալով իրատեսական նպատակների տեսլականով:

ՄԿՈՒՀԱԽ-ը, որը հիմնադրվել է 2008թ., որպես կառավարության, գործառուների և արհմիությունների հավասար ներկայացուցությամբ (7 մարդ՝ յուրաքանչյուրից) եռակողմ խորհրդակցական մարմին, նիստեր է գումարում եռամյակը մեկ, և ՆՄՄԿ վարչությունը պատասխանատու է այս նիստերի կազմակերպման համար: ՄԿՈՒՀԱԽ-ի հիմնական նպատակներն են՝ 1) որոշարկել ՄԿՈՒ ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները, 2) հաստատել ՄԿՈՒ զարգացման ծրագրերը, 3) բարձրացնել ոլորտում

իրականացվող բարեփոխումների արդյունավորությունը և ամրապնդել ու խորացնել սոցիալական գործընկերությունը:

ՄԿՈՒԶԱԿ-ը շարունակում է մնալ ՆՄՄԿ վարչության գործառնական թերթ: Այն մշակում է կրթական չափորոշիչներ և մոդուլային ուսումնական պլաններ, իրականացնում է հաստատությունների տնօրենների և դասավանդողների, ոլորտային հանձնաժողովների անդամների վերապատրաստումներ, ձեռնարկների հրատարակում և այլն:

Կենտրոնը կազմակերպում է նաև ՄԿՈՒ հաստատություններում նոր ուսումնական պլանների/չափորոշիչների իրականացման և բարեփոխումների ընդհանուր ազդեցության մշտադիտարկումներ և պատասխանատու է բարեփոխումների տեսանելիության, ինչպես օրինակ՝ ՄԿՈՒ ամսագրերի, գրքույների, օրացույցների հրատարակումը համար: 2013թ. Հայաստանը դարձել է «Համաշխարհային հմտություններ» միջազգային կազմակերպության անդամ, որտեղ երկիրը ներկայացնում է ՄԿՈՒԶԱԿ-ը: Կենտրոնը վերահսկում է նաև ՈՀ-ների գործունեությունը:

ՈՀ-ները ստեղծվել են՝ որպես ԿԳՆ-ի խորհրդակցական մարմիններ՝ կրթական չափորոշիչների և ուսումնական պլանների մշակման աշխատանքների ուղղորդման և դրանց փորձաքննություն իրականացման նպատակով: Սոցիալական գործընկերներն անդամակցում են այդ հանձնաժողովներին, որոնց նիստերը գումարվում են նախարարության հատուկ պահանջով: ՈՀ-ները գործում են որպես պաշտոնապես ճանաչված մշտական աշխատանքային կառույցներ հիմնականում կրթական նպատակների համար, մինչետ նրանք որևէ դեր չեն խաղում կոնկրետ ոլորտի համար հմտությունների որոշարկման կամ կանխատեսման գործում կամ կարծիք արտահայտում ի լուր կրթությունը, գրաղվածությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ներկայացնող ավելի լայն ինստիտուցիոնալ լսարանի: Ներկա ոլորտային հանձնաժողովների փոխակերպումը հմտությունների կարիքների համար պատասխանատու, լայնորեն ճանաչված մարմինների կարող է կառավարության համար միջնաժամկետ գերակայություն դառնալ՝ խթանելով համակարգի արդիականացման գործընթացը:

Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը (ԱՍՀԱԻ) իրականացնում է սոցիալական կարիքների գնահատման հետազոտություն Հայաստանի ողջ տարածքում 1000 տնային տնտեսությունների հարցման միջոցով: Արդյունքները պատրաստ կինեն 2014թ. Վերջին: ԱՍՀԱ-ի նոր նախաձեռնություն, որը վերաբերում է մանկաների և ծերանցների օպտիմալացմանն ու ռացիոնալացմանը, աշխատակազմի աշխատավարձերի ներդաշնակեցմանը, որոնք այս պահին շատ տարրեր են և հիմնված չեն հստակ ու թափանցիկ չափանիշների վրա: Ինստիտուտը ներգրավված է եղել 120 գրադարանների նկարագրերի մշակման աշխատանքներում: Այդ գրադարանների ընտրությունը պայմանավորված էր ինստիտուտի կողմից իրականացված՝ աշխատաշուկայի կարիքների վերաբերյալ հետազոտությունների արդյունքներով: ԱՍՀԱԻ-ն սկսել է սերտորեն համագործակցել ԿԳՆ-ի հետ և մասնակցել ՈՀ-ների նիստերին: Այսինքն՝ գրադարանների նկարագրերը, որոնք կմշակվեն ապագայում, հիմք կծառայեն ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից որակավորումների չափորոշիչների մշակման համար: ԱՍՀԱԻ-ն համագործակցում է ԱՄՆՄԶԳ, ՅՈՒՆԻՍԵՖ և «Փրկեք երեխաներին» ծրագրերի հետ՝ ինտերված սոցիալական ծառայությունների և անօթևան մարդկանց ուղղված ծրագրերի իրականացման գործում:

ՄԿՈՒ արդյունավետությունը բարձրացնելու և այն մարզային ու տեղական կարիքներին համապատասխանեցնելու նպատակով բոլոր ՄԿՈՒ քոլեջներում շարունակում են գործել կառավարման խորհուրդներ: Դրանք կազմված են ուսանողների, սոցիալական գործնկեր կազմակերպությունների, տեղական կազմակերպությունների, գրաղվածության կենտրոնների ներկայացուցիչներից: Խորհուրդն իրավասու է հաստատել բյուջեն, ուզմակարական ծրագրերը, ուսման վարձաշակը, ընտրել տնօրեն և այլն: Խորհուրդները նիստեր են գումարում տարին առնվազն չորս անգամ և տարրեր առիթներով ստացված հետադարձ կապի տեսանկյունից նրանց արդյունավետությունը, կարծես թե, մեծապես կախված է տնօրենի անձից ու նրա պատասխանատվությունից, ով հիմնական դերակատարն է խորհրդում ընդգրկված բոլոր կողմերի շահագրգուվածությունն ու պատրաստակամությունը խթանելու գործում:

Գործատուները, որքան հնարավոր է, համագործակցում են արտադրական պրակտիկայի (գործնական ուսուցման) կազմակերպման հարցում և մասնակցում են ավարտական քննություններին ու գնահատում ուսանողների գործնական կարողությունները: Այնուամենայնիվ, ԵԿՀ կողմից կազմակերպված որոշ սեմինարների ընթացքում գործատուներն ընդգծեցին, որ ԿԳՆ-ն պետք է ապահովի խրախուսական որոշակի մեխանիզմներ, որպեսզի այս համագործակցությունն առավել համակարգային դառնա, այլ ոչ միայն լինի բիզնեսի բարի կամքի վրա հիմնված: Զբաղվածության նոր ակտիվ միջոցառումները, որոնք կրականացվեն 2015թ. ԶՊԳ-ի կողմից, ներառում են գործնական ուսուցման մեջ ընդգրկված

գործատուների և ուսանողների (աշկերտների) խրախուսական միջոցներ, և այսպիսով, կարելի է հուսալ, որ կրթությունից աշխատանքի անցումը որոշ չափով ավելի դյուրին կրտանա:

Սոցիալական գործընկեր կազմակերպությունները, ինչպիսիք են Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ), ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը (ԱԱՊ) շարունակում են ակտիվություն մասնակցել կենտրոնական և տեղական մակարդակներում կազմակերպություններին և իրենց ներկայացուցիչներին են առաջադրում ոլորտային հանձնաժողովներում:

Հմտությունների կանխատեսման ու համապատասխանեցման համակարգը դեռևս մշակման փուլում է: Ինչպես արդեն նշվել է, ինստիտուցիոնալ համագործակցությունը ԿԳՆ-ի, ԱԱՀ-ի, այլ նախարարությունների, արհմիությունների և գործատուների միջև տեղի է ունենում ազգային մակարդակով ՄԿՈՒԶԱԽ-ի և տեղական մակարդակով քուեցների կառավարման խորհուրդների միջոցով: ԱԱՀ-ի կողմից իրականացվում են ամենամյա հետազոտություններ գործատուների հետ հարցազրույցների միջոցով, որոնք ուղղված են պահանջվող որակավորումների տեսանկյունից աշխատաշուկայի վերաբերյալ որակական և քանակական տեղեկությունների հավաքագրմանը, սակայն արդյունքները, կարծես թե, լայնորեն չեն տարածվում և չեն օգտագործվում կրթական նպատակներով:

ԶՊԳ-ն նաև իրականացնում է աշխատաշուկայի կարիքների «քարոմետր» կոչված հետազոտություն, սակայն դա ևս չի տարածվում ու կիրառվում կրթական նպատակներով:

Կառավարման տեղեկատվական համակարգը, որն ընդգրկում է ամբողջ ՄԿՈՒ և ԲԿ համակարգերը, գործարկվելու է 2014թ. վերջին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ԿԳՆ կառուցվածքը

Հավելված 2. Կրթության համակարգի կառուցվածքը

Հավելված 3. Կառավարման այլուսակը

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՊ	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱԱՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆՄՁԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԱԱՀԱԻ	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ
ԱԱՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)
ԵԿՀ	Եվրոպական կրթական հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶՊԳ	Զբաղվածության պետական գործակալություն
ԿԳՆ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ԿԽ	Ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդներ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԳՀՄ	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
ՀՀԸ	Հայաստանի հեռանկարային զարգացման 2014-2025թ. ռազմավարական ծրագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄԿՈՒ	Հիմնական ՄԿՈՒ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՈԱԾ	Հայաստանի որակավորումների ազգային շրջանակ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԿՄԿ	Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն

ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄԿՈՒԶԱԽ	ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդ
ՄԿՈՒԶԱԿ	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն
ՆՄՄԿ	Նախնական և միջին մասնագիտական կրթություն
ՇՄԿՈՒ	Շարունակական մասնագիտական կրթություն և ուսուցում
ՈԱԱԿ	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԵԾ	Որակավորումների եվրոպական շրջանակ
ՈՀ	Ոլորտային հանձնաժողով
ՈՒԱՀ	Ուսուցման ազգային հիմնադրամ
ՏՀՀ	Տեղեկատվություն և հեռահաղորդակցում
ՏՄԿՈՒ	Տեխնիկական և մասնագիտական կրթություն և ուսուցում
ՏՊՔ	Տարածաշրջանային պետական քոլեջ
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություններ (ձեռնարկատիրություն)
ՓՄԶՁԱԿ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ISCED	International Standard Classification of Education (Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում)

ՀՂՈՒՄՆԵՐ

Գործազրկության փաստացի մակարդակը Հայաստանում. Տնային տնտեսությունների հետազոտության վերլուծությունը, Երևան, 2012թ. http://employment.am/up/attach/attach_eng18.doc

Հայաստանի ՄԿՈՒ ՏՍ ծրագիր. Առաջընթացի եռամսյակային հաշվետվություն, 2-րդ եռամսյակ, 2012թ.

Հայաստանի դրվեսական զեկուց 2013. Մարդկային կապիտալի և աճի հեռանկարներ,

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (ՏՀՀԿ), Երևան, Հայաստան, 2013թ. դեկտեմբեր

Միենա Կորրադինի, Եվրոպական կրթական հիմնադրամ. ԵԿՀ ծրագրի շրջանակում Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում արձանագրված առաջընթացի գնահատում, Թուրինի գործընթացի հաշվետվություններ 2010 և 2012թթ.

ԵԿՀ-ի ուսումնասիրությունը «Հմտություններ և միգրացիա» թեմայի վերաբերյալ, նախագիծ, 2012թ. օգոստոս

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք. Ազգային ինդիկատիվ ծրագիր 2007–2010թթ.

Եվրոստատի Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների ժողովորագրություն, 2011թ., <http://epp.ec.europa/eurostat>

ՀՀ կառավարություն. «Հայաստանում ցլյանս ուսումնառության հայեցակարգը», 2009թ.

ՀՀ կառավարություն. «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգ», 2009թ.

ՀՀ կրթության զարգացման 2011–2015թթ. ազգային ծրագիր, 2011թ.

ՀՀ կառավարություն. «Կայուն զարգացման ծրագիր» (հայտնի՝ որպես ԱՀՌԾ-2)

ՀՀ կառավարություն. «Հայաստանի հեռանկարային զարգացման 2014–2025թթ ռազմավարական ծրագիր»

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին կրթության մասին» ՀՀ օրենք, 2005թ.

ԱՄԿ, «Քերականական վերաբերյալ վիճակագրական տվյալների թարմացումը ինֆորմալ տնտեսության ոլորտում», ԱՄԿ, Վիճակագրական վարչություն, 2011 հունիս.

Հմտությունների պահանջարկի համապատասխանեցումն ու կանխատեսումը, Արայիկ Նավոյան, ԵԿՀ, ազգային զեկուցի նախագիծ, 2014թ. մայիս

ՀԶՆ-ի Արագացման շրջանակի կիրառումը Հայաստանում. ՀՀՆ 1 (2.Ա) գերակայության իրականացում

Ազգային վիճակագրական ծառայություն. «Աղքատությունը և Սոցիալական վիճակը», 2012թ.

Remittances: statistical accuracy and financial benefits, Anna Prokhorova, WB, MiRPAL Co-ordinators for Russia, November 2013

Remittances in Armenia: Dynamic patterns and drivers by Armine Ghazaryan and Guillermo Tolosa, IMF, June 2012

Հրադակածության պետական ծառայության կողմից կատարված հետազոտություն, 2012թ. հոկտեմբեր.

Հրադակածության պետական ծառայության գործակալություն. Տարեկան հաշվետվություն, 2012թ.


Հայաստանի վիճակագրական լրարեգիստ, 2012թ. www.armstat.am/file/doc/99466623.pdf

The Economy Values Research Centre (World Economic Forum's Global Competitiveness Network) – The National Competitiveness Report, 2012, Armenia


World Bank and national analysis of the adequacy of competences provided by VET system for labour market requirements, 2011-ETF

World Bank, 'Armenia partnership, country program snapshot', Yerevan, April 2012

Հավելված 1. ԿԳՆ կառուցվածքը



Հավելված 2. Կրթության համակարգի կառուցվածքը



Հավելված 3. Կառավարման աղյուսակ

Գործառույթները ՄԿՈՒ համակարգում	Մարմին/նպատակների սահմանում	Կարողություն/իրականացման պատասխանատվություն	Ռեսուրսների իրականացում	Հաշվետվողականություն, մշտադիտարկում, գնահատում
	Քաղաքականություն և օրենսդրություն			
	Ովքե՞ր են այն դերակատարները, որոնք պաշտոնապես պատասխանատու են այս գործառույթի համար: Արդյոք դերերն ²⁶ ու պատասխանատվությունը պատշաճ կերպով են սահմանված:	Արդյոք դերակատարներն ունե՞ն տվյալ գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ (մասնագիտական) կարողությունները:	Արդյոք դերակատարներն ունե՞ն տվյալ գործառույթն իրականացնելու համար բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ	Ինչպես են պատասխանատու դերակատարները հաշվետվություն ներկայացնում կատարված աշխատանքի համար:
Ազգային ՄԿՈՒ և զբաղվածության քաղաքականությունների սահմանում	ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) պատասխանատու է նախնական (արհեստագրքական), միջին մասնագիտական և շարունակական կրթության համար: ՄԿՈՒ-ին մեթոդական աջակցություն տրամադրող մարմինը ՄԿՈՒՀԱԿ-ն է, որը գտնվում է ԿԳՆ-ի ենթակայության տակ: ՄԿՈՒՀԱԿ-ը ստեղծվել է, ԿԳՆ-ին խորհրդատվություն տրամադրելու, այն է՝ ՄԿՈՒ զարգացման ծրագրերի մշակմանը նպաստելու, ոլորտի բարեփոխումների արդյունավետ իրականացումը խթանելու և սոցիալական գործընկերության հետագա խորացումն ապահովելու նպատակով: ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ առողջապահության և ՀՀ մշակույթի նախարարությունները այլևս պատասխանատու չեն ՄԿՈՒ համար, որը փոխանցվել է ԿԳՆ-ի ենթակայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱԱՀՆ) պատասխանատու է զբաղվածության քաղաքականության համար: ԱԱՀՆ ունի առանձնացված ստորարաժանում՝ Զբաղվածության պետական գործակալությունը, որի խնդիրն է՝ զբաղվածության կարգավորման պետական քաղաքականության իրականացումը:	Դերակատարներն ունեն համապատասխան կարողություններ, սակայն պահանջվում է բարեփոխումների և մոդեռնացման մշակման և ուսուցչների բավարար չեն:	Մարդկային ռեսուրսները համապատասխան են, սակայն ֆինանսական ռեսուրսները բավարար չեն:	ՄԿՈՒՀԱԿ-ը պատասխանատու է մեթոդական բարեփոխումների, չափորոշիչների և մոդեռնացման մշակման և ուսուցչների վերապատրաստման համար: ՄԿՈՒՀԱԿ-ը տարին երկու անգամ հաշվետվություն է ներկայացնում ԿԳՆ և յուրաքանչյուր տարվա վերջում հաշվետվություններ է ներկայացնում ՄԿՈՒՀԱԿ-ին: ԿԳՆ-ն հաշվետու է ՀՀ կառավարությունը, որին և հաշվետվություններ է ներկայացնում: Գործում են հաշվետվության համակարգեր վարչության և նախարարության ներսում:
ՄԿՈՒ և զբաղվածության ազգային քաղաքականությունների մշտադիտարկում	Նախարարություններ (իմանականում ԿԳՆ և ԱԱՀՆ), ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, Զբաղվածության պետական գործակալություն	Նախարարությունները չունեն իրականացումը վերահսկելու բավարար կարողություններ	Մարդկային ռեսուրսները բավարար են, սակայն այս ռեսուրսների արդյունավետ կիրառումը խնդիր է: Աշխատակազմը պահանջում է ավելի լավ վերապատրաստում: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն:	Գործում են հաշվետվության համակարգեր վարչությունների և նախարարությունների ներսում: Նախարարությունները հաշվետու են ՀՀ կառավարությունը, որին և հաշվետվություններ են ներկայացնում:

²⁶ Դերակատարները կարող են ունենալ որոշում կայացնելու, հորիդատվություն տրամադրելու կամ գործադիր դեր:

ՄԿՈՒ օրենսդրությունը (հիմնական և շարունակական)	ԿԳՆ	Կարողությունները բավարար են	Ֆինանսական և մարդկային ռեսուրսները բավարար են	ԿԳՆ-ն հաշվետու է << կառավարությունը, որին և հաշվետվություններ է ներկայացնում: Գործում են նաև հաշվետվության համակարգեր վարչությունների և նախարարության ներսում: ՄԿՈՒ օրենսդրությունը և նոր բարեփոխումները ըննարկվում են ՄԿՈՒԶԱԽ-ի նիստերում:
Որակավորումներ և ուսումնական պլաններ				
Ազգային, ոլորտային հմտությունների կամ ուսուցման կարիքների վերլուծություններ	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, Զբաղվածության պետական գործակալություն	Մասնագիտական կարողությունների անբավարարություն	Մարդկային ռեսուրսները բավարար են: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն:	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին
Զբաղմունքների ցանկի մշակում	ԱԱՀՆ /Ազգային ինստիտուտ/ԿԳՆ /ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ռեսուրսները բավարար չեն	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին
Չափորոշիչների/ որակավորումների սահմանում կամ վերանայում	ԿԳՆ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն Համապատասխան նախարարությունները, սոցիալական գործընկերները և ՄԿՈՒ հաստատություններ մասնակցում են չափորոշիչների մշակմանը	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ռեսուրսները բավարար չեն	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին Գործում են հաշվետվության համակարգեր վարչությունների ներսում:
Ուսումնական պլանների (բոլոր տեսակների) մշակում կամ վերանայում	ԿԳՆ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, ՄԿՈՒ հաստատություններ	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ռեսուրսները բավարար չեն	ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու է ԿԳՆ-ին Գործում են հաշվետվության համակարգեր վարչությունների ներսում:
Դասավանդողներ և ուսուցանողներ				
ՄԿՈՒ դասավանդողների պատրաստում և ներածական	ԿԳՆ՝ Կրթության ազգային ինստիտուտ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, դուռըներ	Մասնագիտական կարողությունները բավարար են	Մարդկային ռեսուրսները բավարար են: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն:	Կրթության ազգային ինստիտուտը, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնը հաշվետու են ԿԳՆ-ին
Դասավանդողների հավաքագրում (վարձում)	ՄԿՈՒ հաստատություններն իրենք են կատարում դասավանդողների հավաքագրումը	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ռեսուրսները բավարար չեն	Հաշվետվողականությունը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
ՄԿՈՒ ուսուցիչների վերապատրաստում	ԿԳՆ՝ Կրթության ազգային ինստիտուտ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն, դուռըներ	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ռեսուրսները բավարար չեն	Հաշվետվողականությունը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
Ուսուցիչների գնահատում և կարիքնայի զարգացում	ՄԿՈՒ հաստատություններ	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ռեսուրսները բավարար չեն	Հաշվետվողականությունը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
ՄԿՈՒ իրականացնողներ				
Իրականացնողների ցանց - հիմնական ՄԿՈՒ - շարունակական ՄԿՈՒ	Նախարարություններ (վերոնշյալ), Կրթության ազգային ինստիտուտ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն	Մասնագիտական կարողությունները բավարար են	Մարդկային ռեսուրսները բավարար են: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն	Գործում են հաշվետվության համակարգեր վարչությունների և նախարարությունների ներսում:

ՄԿՈՒ ծրագրերի (մասնագիտությունների) և ուսանողների թվի պլանավորում	ԿԳՆ, << առողջապահության, << մշակույթի, << սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններ՝ << կառավարության հետ համագործակցությամբ, ՄԿՈՒ հաստատություններ՝ ԿԳՆ-ի հետ համագործակցությամբ	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Մարդկային ռեսուրսները բավարար են, սակայն տվյալների բազա և այլ կարողություններ են պահանջվում: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն	Գործում են հաշվետվության համակարգեր վարչությունների և նախարարությունների ներսում:
Մասնագիտական ուսումնական հաստատությունների բյուջեների պլանավորում	ԿԳՆ, << ֆինանսների նախարարություն	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Մարդկային ռեսուրսները բավարար են, սակայն տվյալների բազա և այլ կարողություններ են պահանջվում: Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն	Գործում են հաշվետվության համակարգեր վարչությունների և նախարարությունների ներսում:
Հաստատությունների ծախսերի խնդիրներ (հաստատությունների բյուջեների կառավարում)	ՄԿՈՒ հաստատություններ, ՄԿՈՒ հաստատությունների կառավարման մարմիններ	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն	Տնօրենները տարեկան հաշվետվություններ են ներկայացնում կառավարման խորհուրդներին: Որոշ ՄԿՈՒ հաստատություններ մշակում են իրենց բիզնես պլանը յուրաքանչյուր երեք տարին մեկ:
Ուսումնառության նյութեր և սարքավորումներ				
Ուսումնառության նյութեր	ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ֆինանսական ռեսուրսները բավարար չեն	Հաշվետվողականություննը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
Արեստանոցների սարքավորումներ	<< կառավարություն, դոնորներ	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Ռեսուրսները բավարար չեն	Հաշվետվողականություննը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
Գործնական ուսուցման վայրեր				
Գործառուների հետ կապի ապահովում	ԿԳՆ, ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդ, ՄԿՈՒ հաստատություններ, ԱՍՀԵ/ Զբաղվածության պետական գործակալություն	Մասնագիտական կարողությունները բավարար են	Այս ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խնդրահարուց է: Անհրաժեշտ է վերլուծել աշխատաշուկայի պահանջարկը և ամրապնդել համագործակցությունը գործառուների և ՄԿՈՒ հաստատությունների միջև	Հաշվետվողականություննը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
Գործնական ուսուցման տեղերը ընկերություններում	ՄԿՈՒ հաստատություններ	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Ռեսուրսների անբավարարություն: Շատ ընկերություններ չեն վստահում ՄԿՈՒ ուսանողներին:	Հաշվետվողականություննը՝ ՄԿՈՒ հաստատությունների միջոցով
Աշկերտություն	ՄԿՈՒ հաստատություններ	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Ռեսուրսների անբավարարություն: Արեստանոցների, լարուատորիա-ների, վերապատրաստված դասավանդողների անբավարություն:	Հաշվետվողականություննը՝ ՄԿՈՒ հաստատությունների միջոցով

Գնահատում և վկայագրում				
Ուսանողների հմտությունների գնահատում	ՄԿՈՒ հաստատություններ	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ուսուլըները բավարար են	Հաշվետվողականությունը՝ ՄԿՈՒ հաստատությունների միջոցով
Վկայականների (դիպլոմների) շնորհում	ԿԳՆ	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ուսուլըները բավարար են	Հաշվետվողականությունը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
Մշտադիտարկում և ազդեցություն				
ՄԿՈՒ իրականացման որակի մշտադիտարկում	ԿԳՆ, ՄԿՈՒ ազգային կենտրոն, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՊԱԱԿ)	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Ուսուլըները բավարար են: Տվյալների բազայի անբավարարություն:	Հաշվետվողականությունը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
Կրթությունից աշխատանքի անցման կամ հետամուս հետազոտություններ	Չի իրականացվում	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Ուսուլըների բացակայությունն	Հաշվետվողականություն չկա
Հետազոտություն և նորարարություն				
Հետազոտություն և նորարարություն, ներառյալ՝ նորարարությունների փոխանցումը պիտուային համակարգային մակարդակ	ԿԳՆ, դոնորներ	Մասնագիտական կարողությունները բավարար չեն	Ուսուլըների բացակայությունն	Հաշվետվողականությունը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով
Դոնորների համակարգում				
ՄԿՈՒ դորտի դոնորների արդյունավետ համակարգում	ԿԳՆ	Մասնագիտական կարողությունները բավարար են	Ուսուլըները բավարար են	Հաշվետվողականությունը՝ վարչությունների ներսում գործող հաշվետվությունների համակարգի տեսքով